



ԳԼՈԲՈՒՍ



*Հրատարակում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ*

9 (98)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈՒԲՈՒՍ

Թիվ 9 (98), 2018

«ԳԼՈՒԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների
ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, տ.գ.թ.

Արա Մարջանյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական,
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Հանրային կառավարման
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

Տնտեսական գիտությունների թեկնածու

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր

Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի

տեղակալ

Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր

Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու

քարտուղար

Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ

Արեստակես Միմալոբյան

Դիանա Գալստյան

Կարեն Վերանյան

Սամվել Մանուկյան

Վահագն Ազյան

Վահրամ Հովյան

ԳԼՈՒԲՈՒՄ

Թիվ 9 (98), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գազիկ Հարությունյան

Դեն Սյառային և «գիտնականների կայսրություն» 4

Վահրամ Հովյան

Հայ ինքնությունը սփյուռքում 21-րդ դարում 11

Մամվել Մանուկյան

Մշակութային քաղաքականությունը Հայաստանի և Ադրբեջանի
ինտերնետային կայքերում՝ panarmenian.net և day.az կայքերի օրինակով 15

Արա Մարջանյան

Ղազախստանի արբանյակային ունակությունները
Մաս Ա. Ուղեծրային խմբավորում, արբանյակային տեղորոշման ցանց 24

Արմեն Մանվելյան

Էներգետիկ վիճակագրությունն ըստ Բրիթիշ Փեթրոլիումի
տարեկան զեկույցների. գազի բաղադրիչ 34

Անդրանիկ Հովհաննիսյան

Անջատողականության վտանգը Չինաստանում.
ԱՄՆ քաղաքականությունը և ուլդուրական սփյուռքի դերը 39

**ԴԵՆ ՍՅԱՈՊԻՆ ԵՎ
«ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ»**

Գազիկ Հարությունյան՝

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամում վերջին տարիներին կատարվում են միջդիսցիպլինար բնույթի հետազոտություններ՝ ուղղված ինչպես հայաստանյան, այնպես էլ այլ երկրների «կրիտիկական ենթակառուցվածքների և ոլորտների» վերհանմանը և դրանց կարևորության գնահատմանը: Այդ աշխատանքների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ ազգային անվտանգության տեսանկյունից հիմնական և որոշիչ է հանդիսանում գիտատեխնոլոգիական-հոգևոր (այս երկու հասկացությունները միաձուլված են) ոլորտը, որը պայմանականորեն կարելի է «անվանել կրիտիկական ոլորտների կրիտիկական ոլորտ»: Վերջինիս կայացման աստիճանը պայմանավորում է մնացյալ բոլոր ուղղությունների զարգացումը՝ սկսած որոշումների ընդունման մեխանիզմից և վերջացրած դրանից կախված տնտեսական, ռազմական, սոցիալական և այլ բնագավառների արդյունավետ զարգացումով: Այս հայեցակարգի շրջանակներում մեր ուշադրությունը գրավեց «չինական հրաշք» կոչվող ֆենոմենը, երբ ազգ-պետությունը պատմական առումով կարճ ժամանակում՝ 40 տարում, զարգացման թռիչք կատարեց, և եկանք այն եզրահանգման, որ իրականում «հրաշք» տեղի չի ունեցել. այդ գործընթացը խիստ օրինաչափ էր և պայմանավորված էր չինական քաղաքակրթության ներուժով: Այս առումով փոքր պատմական էքսկուրս կատարենք:

Մեր թվարկությունից առաջ Չինաստանի բնակչությունը կազմում էր մոտ 12 մլն և գրեթե հավասար էր նույն ժամանակաշրջանում Հունաստանի բնակչությանը՝ մոտ 10 մլն: Ինչպես գիտենք, հույների թիվն այսօր գրեթե նույնքան է, մինչդեռ արդի Չինաստանում ապրում է շուրջ 1.5 մլրդ մարդ: Այս ֆենոմենը հաճախ մեկնաբանում են այլ գործոններով, մինչդեռ այն պայմանավորված է չինացիներին բնորոշ հոգևոր-մտավոր և ռազմա-

* «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն:

վարական մտքի բարձր մակարդակով: Այս համատեքստում կարելի է երկար խոսել Սուն Յզիի «Ռազմավեստի տրակտատի մասին»՝ հիշելով չինական ասացվածքը, թե «ռազմավարությունը դա ապագայի զավթումն է», չինական պոեզիայի մասին: Եվ այս առիթով նկատենք, որ բարդ հիերոգլիֆային գրի պահպանումը իրենք՝ չինացիները, մեկնաբանում են, մասնավորապես, նրանով, որ կարդալով, օրինակ, Լի Բոի կամ Դու Ֆուի պոեզիան հիերոգլիֆներով այսօր, այն ընկալում են այնպես, ինչպես Լի դինաստիայի (մ.թ. 7–10-րդ դարեր) ժամանակակիցները: Նման բարձր մշակույթի արտահայտությունն են Սուն Յզիից հետո երկրորդ ամենախոշոր ստրատեգ համարվող Ու Յիի (մ.թ.ա. 5-րդ դար) խոսքերն այն մասին, որ *«հոգատարությունը պետության նկատմամբ պետք է արտահայտվի ժողովրդի լուսավորումով և մարդկանց սիրելով»* [1]: Այս առիթով նկատենք, որ «մարդկանց սիրել» արտահայտությունը պետական կառավարման համատեքստում այդ դարաշրջանում այլ ազգերի պատմական աղբյուրներում, թերևս, չի հանդիպում:

Վերոնշյալ համառոտ նկատառումները վկայությունն են այն իրողության, որ չինական քաղաքակրթությանը բնորոշ են «ժամանակային տրիադայի»՝ անցյալի, ներկայի և ապագայի միասնության փիլիսոփայական ընկալումը և կիրառումը, որն արտահայտվում է նրանց ստրատեգների «պատմության մոռացությունը դավաճանություն է» կամ «ռազմավարությունը դա ապագայի զավթումն է» հայեցակարգային բնույթ կրող ձևակերպումներում: Եվ այս տեսանկյունից, ավարտելով պատմական էքսկուրսը և վերադառնալով մեր դարաշրջան, նկատեմ, որ հատկապես «ժամանակային տրիադայի» միասնական ընկալումը բարդություններ է ստեղծում Չինաստանի մրցակիցների մոտ: Ամեննին պատահական չէ, որ մի հայտնի արևմտյան քաղաքական գործիչ ժամանակին տրտնջացել էր, թե «մեր և չինացիների մոտեցումները ժամանակի հանդեպ միանգամայն այլ են, և դա նվազեցնում է մեր հնարավորությունները՝ ազդելու այդ երկրի վրա»:

Ինչպես տեսնում ենք, չինական ստրատեգները «Նորավանքի» փորձագետներից մի փոքր ավելի վաղ հանգել էին այն հետևությանը, որ ամենակրիտիկական ոլորտը միաձույլ գիտական–հոգևորն է, և պատահական չէ, որ ռուս ականավոր չինագետ Վլ. Մայսավինն իր հիմնական աշխատություններից մեկը կոչում է «Գիտնականների կայսրություն»: Այդ փայլուն ավանդույթը շարունակվում է նաև այսօր [2]: Այդ համատեքստում համա-

ռոտ անդրադառնանք արդի ժամանակաշրջանում ՉԺՀ գիտահետազոտական ռեսուրսներին առնչվող որոշ քանակական ցուցիչների:

Ինչպես հայտնի է, աշխարհում *ԳՀՓԿՄ* (գիտահետազոտական-փորձակոնստրուկտորական մշակումների) ոլորտի ծախսերը 2016թ. կազմել էին \$1.9 տրլն, ինչը կազմում էր համաշխարհային ՀՆԱ (ըստ գնողունակության պարիտետի) 1.74%-ը¹: Այդ բնագավառում ամենամեծ ծախսերն առաջիմ կատարում է ԱՄՆ-ը՝ \$514 մլրդ (համաշխարհային *ԳՀՓԿՄ* ծախսերի 26.4%-ը), երկրորդ տեղում է Չինաստանը՝ \$396 մլրդ (համաշխարհային *ԳՀՓԿՄ* ծախսերի 20.3%-ը)²: Միննույն ժամանակ, ԱՄՆ ցուցանիշը 2012թ. կազմել է \$447 մլրդ և 4 տարում աճել է \$67 մլրդ, մինչդեռ ՉԺՀ ծախսերը 2012թ. կազմել են \$232 մլրդ, այսինքն՝ 4 տարում ավելացել են \$164 մլրդ-ով, ինչը 2.4 անգամ ավելի շատ է, քան ԱՄՆ ծախսերն այդ 4 տարում: Այս միտումները վկայում են այն մասին, որ ամենայն հավանականությամբ մոտ ապագայում ՉԺՀ *ԳՀՓԿՄ* ոլորտում ներդրումները կգերազանցեն համապատասխան ամերիկյան ցուցանիշները: Ի հաստատումն մեր մոտեցման՝ նշենք, որ արդեն իսկ պատենտների հայտերի քանակով Չինաստանը գերազանցում է ԱՄՆ-ին. ՉԺՀ՝ 928 հազար պատենտ, ԱՄՆ՝ 579 հազար: Մասնավորապես, համաձայն Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության տվյալների, բլոկչեյն տեխնոլոգիաների ոլորտում այդ կազմակերպությունն ընդհանուր առմամբ ստացել է 406 հայտ, որից 56%-ը՝ Չինաստանից և միայն 22%-ը՝ ԱՄՆ-ից (նախորդ տարիներին առաջատարը ԱՄՆ-ն էր)³:

Սակայն այս խնդրում առկա է նաև մեկ այլ հանգամանք, որը կարելի է անվանել քաղաքակրթական-աշխարհաքաղաքական: Եթե դիտարկում ենք պայմանական *Հիերոգլիֆների աշխարհի*՝ Չինաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա, Թայվան, Սինգապուր (այս ցուցակում բացակայում է Հյուսիսային Կորեան, որի հաջողությունները միջուկային-հրթիռային տեխնոլոգիաների բնագավառում վկայում են այդ երկրում առկա բավական մեծ գիտատեխնոլոգիական ռեսուրսների մասին), ապա տեսնում ենք, որ *Հիերոգլիֆների աշխարհի* ՀՆԱ-ն ըստ գնողունակության պարիտետի կազմում է \$28,4 տրլն, *ԳՀՓԿՄ* ներդրումները՝ \$678,3 մլրդ, իսկ *ԳՀՓԿՄ* մասը ՀՆԱ-ում կազմում է 2.87%: Մինչդեռ համաշխարհային

¹ 2016 GLOBAL R&D FUNDING FORECAST. A Supplement to *R&D Magazine*. Winter, 2016.

² 2014 GLOBAL R&D FUNDING FORECAST. A Supplement to *R&D Magazine*. December, 2013.

³ <https://hightech.plus/2018/09/04/kitai-v-2017-godu-operedil-vseh-po-kolichestvu-blokchein-patentov>

առաջատար համարվող *Անգլոսաքսոնյան աշխարհի*¹ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի համապատասխան ցուցանիշներն են՝ ՀՆԱ - \$24.1 տրլն, *ԳՀՓԿՄ* - \$618,7 մլրդ, *ԳՀՓԿՄ-ի* մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 1.98%: Այսինքն՝ ՀՆԱ և *ԳՀՓԿՄ* կարևորագույն ցուցանիշներով *Անգլոսաքսոնյան աշխարհն* արդեն իսկ զիջում է *Հիերոգլիֆների աշխարհին*: Այս համատեքստում նկատենք, որ դեռևս 1978թ. երբ իր ակտիվ գործունեությունն սկսեց Դեն Սյաոպինը, ՉԺՀ ՀՆԱ-ն ընդամենը \$215 մլրդ էր, մինչդեռ այսօր այն կազմում է շուրջ \$12 տրլն, այսինքն՝ աճել է շուրջ 55 անգամ: Այլ խոսքերով՝ կարելի է արձանագրել, որ գլոբալ քաղաքակրթական-աշխարհաքաղաքական կենտրոնը հետևողականորեն տեղափոխվում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան (ԱԽՏ), որտեղ գերակայում է Չինաստանը: Հայտնի է, որ վերջինս տարածաշրջանային երկրների հետ ունի որոշակի տարածայնություններ, սակայն որոշ սցենարներում ՉԺՀ-ն ունի այն ռազմավարական-տնտեսական ներուժը, որը թույլ կտա նրան իր շուրջը համախմբել ինչպես ԱԽՏ, այնպես էլ այլ տարածաշրջանների (մասնավորապես՝ Կենտրոնական Ասիայի, Աֆրիկայի) երկրներին, այստեղից բխող բոլոր հետևություններով: Դեն Սյաոպինի դերակատարումը նման իրավիճակ ստեղծելու գործում, անշուշտ, հսկայական է, սակայն փորձենք Դենի բարեփոխումները մեկնաբանել ավելի ընդհանրական՝ գաղափարախոսական տեսանկյունից:

Ինչպես գիտենք, նախորդ դարի 70-80-ական թթ. ղեկավարման միակուսակցական համակարգ ունեցող երկրներում սկսեց նկատվել որոշակի ճգնաժամ: Եվ եթե ԽՍՀՄ-ում ծագած խնդիրների լուծման փորձն ընդունեց գորբաչովյան «պերեստրոյկայի» բնույթ և ավարտվեց ծանր հետևանքներով ու երկրի փլուզմամբ, ապա զարգացումները միանգամայն այլ էին ՉԺՀ-ում: 1977թ. Դեն Սյաոպինի ղեկավարությամբ սկսվեց «Պեկինյան գարունը», որն ավարտվեց պետության ամրապնդմամբ և աննախադեպ ձեռքբերումներով հասարակական-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Ի դեպ, այդ տարիներին Պեկինում բարձր մակարդակով ստեղծվեց մի հանձնաժողով, որն ուսումնասիրում էր խորհրդային փորձը՝ թույլ տրված սխալներից խուսափելու նպատակով: Հատկանշական է նաև, որ նոր ձևավորված ՌԴ սահմանադրությունում փաստորեն արգելվեց պետական գաղափարախոսություն հասկացությունը և զարկ տրվեց համատարած լիբերալիզմին՝ հաշվի չառնելով, որ «Շուկայի տո-

տալ հաղթանակն ավելի վտանգավոր է, քան մենատիրական սոցիալիստական գաղափարախոսության հաստատումը» [3]: Մինչդեռ Չինաստանում, ինչպես արտահայտվել էր Դենը, «Չարժե կաշկանդվել գաղափարախոսական և վերացական վեճերով, թե ինչ անուն է տրվում այս ամենին՝ սոցիալիզմ, թե կապիտալիզմ»: Նշենք, որ այդպիսով Դեն Սյաոպինը բավական առաջ էր անցել գաղափարախոսության այն ժամանակաշրջանի պատկերացումներից և մի քանի տասնյակ տարի առաջ փաստորեն տվել էր ներկայում այդ հասկացությունը սահմանող՝ Վյաչեսլավ Յանկոյին պատկանող արդիական բանաձևը, համաձայն որի՝ «գաղափարախոսությունը հրահանգների համալիր է, որն ապահովում է գործընթացների ամենաարդյունավետ ռեժիմը և փոխկապակցվածությունը»⁴: Այս խիստ դինամիկ, ալգորիթմ հանդիսացող սահմանման կիրառումը պետական կառավարման մեջ թույլ է տալիս լուծել գրեթե բոլոր հիմնախնդիրները: Նման մոտեցումը ենթադրում է նաև բազմագաղափարախոսական համակարգի ձևավորում, որն, ինչպես ցույց է տալիս պատմությունը, ամենաարդյունավետն է: Այդ առիթով համառոտ անդրադարձ կատարենք այս խնդրին:

Ընդունված է համարել, որ գոյություն ունեն հիմնարար երկու ունիվերսալ գաղափարախոսություններ՝ սոցիալիստական (գլխավոր դրույթը հասարակությունում սոցիալական հավասարության սկզբունքների գերակայությունն է) և ազատական (հենքում ընկած է անձի ազատության գերակայությունը): Նման դասակարգումը պայմանավորված է նրանով, որ այդ երկու գաղափարախոսությունների բովանդակությունը կազմող սկզբունքներն այս կամ այն չափով կարող են օգտագործվել գրեթե բոլոր հանրությունների կողմից՝ անկախ նրանց էթնիկական, կրոնադավանական պատկանելությունից: Ի տարբերություն նշված երկուսի, ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունները հենվում են կոնկրետ հանրությանը բնորոշ ազգային-քաղաքակրթական արժեքային համակարգի, ինքնության վերաբերյալ պատկերացումների և ավանդույթների վրա:

Ժամանակի ընթացքում գաղափարախոսությունները, չնայած դրանց հիմնարար դրույթների հարաբերական անփոփոխությանը, որոշակի փոփոխությունների են ենթարկվում: Երբեմն դա տալիս է դրական արդյունքներ, երբեմն՝ ոչ այնքան: Սակայն ամենամեծ փորձությունները

⁴ Янко В.А., <http://yanko.lib.ru>

սկիզբ են առնում այն ժամանակ, երբ հանրությունում որևէ գաղափարախոսություն երկարատև մենաշնորհի և բացարձակ գերակայություն է ձեռք բերում: Որպես կանոն, դա ծանր հետևանքներ է ունենում տվյալ երկրի համար: Այդ երևույթի դասական օրինակներն են նացիոնալ-սոցիալիզմը Երրորդ ռեյխում կամ սոցիալիզմի մենատիրական-բյուրոկրատական մոդիֆիկացիայի հաստատումը Խորհրդային Միությունում: Մինչդեռ պատմական փորձը վկայում է, որ այն հանրությունները, որոնք կարողանում են մտածված չափաբաժիններով համատեղ կիրառել ազատական, սոցիալիստական և ազգային-պահպանողական բնույթի գաղափարախոսությունների դրույթները, զգալի զարգացում և առաջընթաց են ցուցաբերում: Նման օրինաչափությանը ենթարկվող «*բազմագաղափարախոսական*» համակարգը ստացել է «*գաղափարախոսական տրիադա*» անվանումը: Այդ տրիադան զարգացնում և մեծացնում է հանրության տարաբնույթ և առաջին հերթին հոգևոր և մտավոր ռեսուրսները, իսկ քաղաքական համակարգը դարձնում է ավելի ճկուն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարաբերություններում: Վերոնշյալի համատեքստում փորձենք համառոտակի համեմատել ու գնահատել որոշ հանրությունների գործունեության արդյունավետությունը՝ կախված այդ հանրությունների գաղափարախոսական դաշտի բնութագրերից:

Արդյունավետ և մրցունակ «*բազմագաղափարախոսական*» համակարգի արտահայտություն է բրիտանական մոդելը, որն այս կամ այն ձևաչափով ներդրվել է նաև մնացյալ անգլիախոս երկրներում: Այդ երկրների հանրություններին բնորոշ է գաղափարախոսական լայնախոհություն. կոնսերվատիվ (ազգային-պահպանողական) և լեյբորիստական (սոցիալիստական ուղղվածություն) գաղափարների կրողները մշակել են միմյանց փոխլրացնող մեխանիզմներ և համատեղ գործում են ազատական գաղափարախոսական դաշտում, որը հարազատ է անգլոսաքսոնյան հոգեկերտվածքին: Այս գործոնով է, որ պետք է պայմանավորել *Անգլոսաքսոնյան աշխարհի* ռազմավարական ձեռքբերումները և այն, որ վերջին մի քանի հարյուր տարում այդ հանրությունը կարողանում է պահպանել առաջատարի կարգավիճակը:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ում, փոխառելով բրիտանական քաղաքական տրամաբանությունը, թերևս՝ իր պատմական զարգացման յուրահատկության պատճառով, անտեսել են սոցիալիստական տիպի գաղափարախոսության կարևորությունը: Արդյունքում՝ այդ երկրում ազատա-

կանության և սպառողականության բացարձակացումը լուրջ խնդիրներ է առաջացրել, որի հետևանքով էլ ԱՄՆ-ը սկսել է զիջել համաշխարհային առաջատարի դիրքերը:

Սակայն վերադառնանք Չինաստան: Ընդամենը երեք տասնամյակ առաջ միագաղափարախոսական կոմունիստական Չինաստանը բոլոր չափանիշներով հեռու էր առաջատար երկրներից: Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ Դեն Սյաոպինը միակուսակցական համակարգում ներդրեց ազատականության և ազգային պահպանողական (կոնֆուցիոնիստական) գաղափարախոսությունների տարրերը: Հատկանշական է, որ այդ ամենին զուգահեռ՝ պահպանվեցին «ղեկավար» սոցիալիստական գաղափարախոսությունից բխող բոլոր առավելությունները: Սակայն անգամ այդ ունիվերսալ ուսմունքում օգտագործվում են մ.թ.ա. V դարի փիլիսոփա և մտածող Մո Ցզիի դրույթները, որը համարվում է չինական սոցիալիզմի հիմնադիրը: Այլ խոսքով՝ Չինաստանն ադապտացվեց ոչ միայն տնտեսական ազատական իրողություններին, այլև չինական ավանդույթներին և հոգեկերտվածքին: Արդյունքում՝ Չինաստանը դարձավ գերտերություն և առաջատար ինչպես տնտեսական, ռազմական, այնպես էլ տեխնոլոգիաների ոլորտներում: ՉԺՀ ձեռքբերումները պայմանավորված են նաև նրանով, որ վարչաքաղաքական համակարգում գործում են *մերիտոկրատիայի*⁵ սկզբունքները, համաձայն որոնց՝ ղեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեն առավել ընդունակ և պատրաստված անձինք:

Գրականություն

1. Китайская военная стратегия, с. 217, «Изд-во Астрель», «Изд-во Аст», М., 2002.
2. *Малевин Вл.*, Империя ученых, Изд-во «Европа», 379 с., М., 2007.
3. *Белл Д.*, Грядущее постиндустриальное общество, М., Академия, 1999.

⁵ *Մերիտոկրատիա* (լատ. *meritus*՝ արժանապատիվ) – արժանապատիվների իշխանություն:

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Վահրամ Հովյան՝

Հայկական սփյուռքի առջև ծառայած ամենամեծ մարտահրավերներից մեկը ինքնության կորուստն է, քանզի ազգերը մեռնում են ոչ թե ֆիզիկապես, այլ հոգեպես: Անգամ խոշորամասշտաբ կոտորածների ու ցեղասպանությունների միջոցով հնարավոր չէ ֆիզիկապես ոչնչացնել որևէ ժողովրդի ամբողջությամբ: Թե՛ հայերը, թե՛ հրեաները և թե՛ ցեղասպանության ենթարկված այլ ժողովուրդներ, չնայած ահռելի մարդկային կորուստներին, այնուամենայնիվ, չեն վերացել աշխարհից: Փոխարենը վերացել են այն ժողովուրդները, որոնք թեև չեն ենթարկվել ցեղասպանության, բայց դատապարտվել են հոգևոր մահվան, այն է՝ ձուլվել են այլ ժողովուրդների:

Հայ ինքնությունը սփյուռքում տասնամյակներ շարունակ¹ հիմնված է եղել լեզվի, կրոնի, ազգային մշակույթի, Ցեղասպանության հիշողության, հայկական ավանդական ընտանիքի պահպանման գաղափարների վրա, որոնք էլ հանդես են եկել որպես ազգային ինքնագիտակցության բաղադրիչներ: Սակայն այս բոլոր բաղադրիչներն էլ ժամանակի ընթացքում նահանջ են ապրել: Նրանց թուլությունն ու խոցելիությունն ակնհայտ երևում են ժամանակի ու տարածության մեջ:

Ժամանակային առումով հայ ինքնության բաղադրիչների կորուստն իր ցույց է դրվել դեռևս հայկական սփյուռքի ձևավորման վաղ փուլում՝ 1920-

^{*} «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

¹ Չնայած դարերի ընթացքում հայրենի երկրից հայերի շարունակական արտագաղթին և արտերկրում հայկական գաղթօջախների բազմադարյա գոյությանը, այնուամենայնիվ, գիտական շրջանակներում ընդունված է այն տեսակետը, որ հայկական սփյուռքը Ցեղասպանության հետևանք է: Համարվում է, որ նախքան Ցեղասպանությունը եղել են պարզապես հայկական գաղթօջախներ հայրենիքից դուրս, իսկ սփյուռքը՝ որպես բովանդակ ամբողջություն, ձևավորվել է Ցեղասպանության հետևանքով:

30-ական թթ., երբ սփյուռքը կազմում էին Ցեղասպանության ենթարկվածների առաջին սերնդի ներկայացուցիչները, ինչի մասին ահագանգել են ժամանակի հայ մտավորականության ու հասարակական-քաղաքական շրջանակների ներկայացուցիչները:

Տարածության մեջ հայկական ինքնության բաղադրիչների կորուստն ակնհայտ երևում է այն բանում, որ նույնիսկ սփյուռքի ամենաավանդական համայնքներում՝ Մերձավոր և Միջին Արևելքում, դրանք ակնհայտ նահանջ են ապրում: Դա դրսևորվում է ինչպես խառնամուսնությունների աճով, այնպես էլ հայկական դպրոցներ հաճախողների թվաքանակի նվազմամբ, լեզվի տիրապետման, մշակութային հաղորդակցության նահանջով և ազգային ինքնագիտակցության ձևափոխմամբ:

Այսպիսով, կյանքը ցույց է տվել, որ ազգային ինքնության ավանդական հենասյունները, թեև ժամանակի ընթացքում որոշակիորեն կարողացել են ապահովել հայ ինքնության պահպանումը սփյուռքում, այնուամենայնիվ, միայն դրանց միջոցով ներկայում այլևս հնարավոր չէ լուծել սփյուռքում ազգային ինքնության խնդիրը: Հետևաբար, առաջ է գալիս նոր մոտեցումների հրամայականը:

21-րդ դարում սփյուռքահայության շրջանում ազգային ինքնության հենասյուն պետք է դառնա հայոց պետականության գաղափարը: Վերջինս ընդհանուր առմամբ հանգում է հզոր հայրենի պետություն կերտելու գաղափարին՝ որպես համայն հայության հարատևման ու զարգացման երաշխիք: Այն, ըստ էության, հանգում է անգամ պետականակենտրոնության գաղափարին, քանի որ այդ դեպքում պետության շահը, նրա անվտանգության ու զարգացման հարցերը վեր են դասվում անհատական, խմբակային, կուսակցական և այլ շահերից: Յուրաքանչյուր հայ անհատի, խմբի, կուսակցության և այլն (լինի սփյուռքում, թե հայրենիքում) մտահոգության թիվ մեկ առարկան դառնում է Հայաստանի՝ որպես համայն հայության ազգային պետության հզորացումը:

Հզոր հայկական պետականության կերտման գաղափարախոսությունը, որպես սփյուռքում հայ ինքնության պահպանման հենասյուն, ունի առավելություններ ինքնության այլ բաղադրիչների նկատմամբ: Դա, առաջին հերթին, նրա միավորիչ հատկությունն է: Վերջինս բխում է այն հանգամանքից, որ հզոր հայրենիքի գաղափարը չի ենթադրում շերտավորումներ կամ մասնատվածություն:

Ինչպես հայտնի է, սփյուռքը միատարր հանրույթ չէ: Այն տարբեր չափորոշիչներով՝ լեզվական, կրոնադավանանքային, կուսակցական, տարածքային և այլն, բաժանվում է բազմաթիվ խմբերի: Հայ ինքնության հենասյուներից միակը, որը չի ենթադրում ներքին տարաբաժանումներ, Ցեղասպանության հիշողությունն է: Սակայն վերջինը, սփյուռքում հայ ինքնության փոխակերպման հետ մեկտեղ, ինքն էլ է ենթարկվում փոխակերպման՝ դիտվելով որպես տվյալ երկրի պատմության մի մաս:

Պետականակենտրոնության կամ հզոր հայրենի պետության գաղափարախոսությունը, ի տարբերություն ազգային ինքնության վերոհիշյալ հենասյուների, նախ, ինչպես արդեն նշվեց, չունի բաժանարար հատկություն: Հակառակը՝ այն միավորում է տարալեզու, տարադավան, տարբեր կուսակցությունների պատկանող կամ համակրող, տարբեր տարածաշրջաններում ու երկրներում ապրող հայերին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Ի տարբերություն Ցեղասպանության պատմական հիշողության, այն գերծ է այլ ժողովուրդների պատմական հիշողության մեջ ներծծվելու, այլ երկրների պատմության մաս դառնալու վտանգից:

Հզոր պետականության՝ որպես սփյուռքում ազգային ինքնության հենասյան, մասին դրույթը հիմնավորվում է նաև միջազգային, մասնավորապես՝ հրեական փորձով: Հակառակ հրեական սփյուռքի նախանձելի հնարավորություններին, դժվար է պատկերացնել, թե ինչ վիճակում կլինեք այն այսօր, եթե չլինեք Իսրայել պետությունը՝ իր ներկա տնտեսական, գիտատեխնոլոգիական, ռազմական, կրթական և այլ հզորությամբ: Այս համատեքստում չմոռանանք, որ հրեությունը նախքան Իսրայել պետության ձևավորումը՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, իր ողջ ֆինանսական և կազմակերպչական ներուժով հանդերձ, որպես էթնիկ ընդհանրություն գտնվում էր անհետացման եզրին:

Հայ ժողովրդի պարագայում պետականակենտրոնության կամ հզոր պետություն կերտելու գաղափարախոսության՝ որպես ազգային ինքնության հենասյան, որդեգրման համար առկա են ներքին բարենպաստ նախադրյալներ: Բանն այն է, որ ներկայիս հայկական զույգ պետությունները՝ ՀՀ-ն և ԱՀ-ն, առավելագույնս են համապատասխանում ազգային պետության նկարագրին՝ հաշվի առնելով նրանց բնակչության առավելագույն էթնիկ միատարրությունը: Ամերիկյան քաղաքագիտության հսկաներից Սեմյուել Հանթինգթոնը առանձնացնում է ազգային ինքնության երկու տեսակ՝ քաղաքացիական և էթնիկ: Հայաստանն այն դեպքն է, երբ

ինքնության հիշյալ երկու տեսակները ոչ միայն հակադրության մեջ չեն մտնում միմյանց հետ, այլև ներդաշնակ համատեղվում են:

Ասվածը բնավ չի նշանակում, որ կայացած ու հզոր հայրենի պետականությունն իրենով պետք է փոխարինի ինքնության մյուս բաղադրիչներին՝ լեզու, կրոն, մշակույթ, պատմական հիշողություն և այլն: Այն պարզապես պետք է լինի սփյուռքահայի ազգային ինքնագիտակցության առանցքում՝ իրենով սնելով և ուժեղացնելով նաև այդ բաղադրիչները:

Դրա իրականացման եղանակը հետևյալն է: Հզոր հայրենի պետականությունը.

1. ազատում է սփյուռքահայությանը պետականագուրկ ժողովրդի բարդույթից;
2. ներշնչում է ազգային հպարտության (հայությանը պատկանելու հպարտության) զգացում;
3. մղում է ամրապնդելու և ավելի վառ կերպով արտահայտելու հայությանը սեփական պատկանելությունը, ինչն էլ, իր հերթին, մղում է սփյուռքահային առավել նախանձախնդիր լինել հայոց լեզվի, քրիստոնեական հավատի, հայ մշակույթի, պատմական հիշողության պահպանման և ամրապնդման հարցում;
4. մղում է նաև մասնակից լինել հայրենի պետականության (ՀՀ և ԱՀ) շարունակական զարգացումն² ու հզորությունն ապահովելու գործին:

Այսպիսով, ձևավորվում է յուրահատուկ «փակ շրջան», սակայն ոչ թե արատավոր, այլ բարենպաստ: Մի կողմից՝ հզոր հայրենի պետականությունն է ապահովում ազգային ինքնագիտակցության վերելքը սփյուռքում, մյուս կողմից՝ բարձր ազգային ինքնագիտակցությունը մղում է սփյուռքին գործունե մասնակցություն ունենալ հայրենի պետության զարգացման գործին՝ ապահովելով վերջինիս հզորությունը:

²Մեր օրերում բավական շատ է օգտագործվում «մարտահրավեր» հասկացությունը: Կարծում ենք, 21-րդ դարում յուրաքանչյուր պետության և ազգի համար ամենալուրջ մարտահրավերներից մեկը սեփական երկրի շարունակական զարգացման ապահովումն է: Այստեղ «զարգացում» հասկացությունն օգտագործվում է ամենալայն իմաստով՝ տնտեսական, գիտակրթական, տեխնոլոգիական, մշակութային, ռազմական, ժողովրդագրական և այլն: Առանց շարունակական և համապարփակ զարգացման ցանկացած պետություն դատապարտված է հետամնացության և վերջնարդյունքում՝ գաղութացման զարգացած պետությունների կողմից: Պատահական չէ, որ հաճախ «անվտանգություն» և «զարգացում» հասկացությունները դիտվում են որպես հոմանիշներ, քանզի առանց ցարգացման անհնար է ապահովել, անգամ՝ պատկերացնել որևէ երկրի անվտանգությունը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՎ ԱՂԲԵԶԱՆԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ՝
PANARMENIAN.NET ԵՎ DAY.AZ ԿԱՅՔԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Սամվել Մանուկյան, Մերի Շահբազյան

Խնդիրը

Չանգվածային լրատվամիջոցները, բացի ինֆորմացիայի տարածումից, նաև սոցիալականացնում են իրենց լսարանը: Դա տեղի է ունենում անկախ նրանից, թե արդյոք դրանք ունեն այդ նպատակը, թե ոչ: Հայաստանի հասարակությունում ինտերնետն իր տարածվածությամբ հեռուստատեսությունից հետո երկրորդն է, իսկ 18-29 տարեկան երիտասարդների շրջանում՝ առաջինը¹: Այդ պատճառով ինտերնետով հաղորդվող ինֆորմացիան ավելի ու ավելի կարևոր նշանակություն է ստանում հասարակական գիտակցությունում աշխարհայացքի և աշխարհի կերպարի ձևավորման, ինչպես նաև մշակութայնացման տեսակետից²: Ներկայում Հայաստանին ուղղված բազմաբնույթ արտաքին և ներքին սպառնալիքներն ակտուալացնում են այն հարցը, թե ինչ արժեհամակարգում են ինտերնետային լրատվական կայքերը սոցիալականացնում Հայաստանի հասարակությունը, հատկապես երիտասարդությանը:

¹ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագետ, սոց. գ.թ.:

² Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ մագիստրանտ:

¹ *Մանուկյան Ս.*, Հեռուստալսարանի դինամիկան Հայաստանում 2012-2016թթ. // «21-րդ ԴԱԸ», 6 (76), 2017, էջ 4-18:

² *Մանուկյան Ս.*, *Գալստյան Ղ.*, Ինչ են մատուցում լսարանին Հայաստանի հեռուստալիքները // Գլոբուս, թիվ 9 (88), 2017, էջ 14-26; *Մանուկյան Ս.*, *Գալստյան Ղ.*, *Հակոբյան Լ.*, Աշխարհի կերպարը Հայաստանի հեռուստատեսային լուրերում // Գլոբուս, թիվ 10 (89), 2017, էջ 11-23; *Մանուկյան Ս.*, *Գալստյան Ղ.*, *Հակոբյան Լ.*, *Սարիբեկյան Ս.*, Հայկական հեռուստատեսությամբ հաղորդվող սերիալների բովանդակային առանձնահատկությունները // Գլոբուս, թիվ 6 (95), 2018: 15 8-13; *Մանուկյան Ս.*, *Գալստյան Ղ.*, Մշակութային-լուսավորչական-դաստիարակչական հաղորդումները Հայաստանի և Ադրբեջանի հիմնական հեռուստալիքներում // Գլոբուս, թիվ 3 (92), 2018, էջ 18-25; *Манукян С., Карукян Л.*, Информационная политика интернет видеоканала «DW Новости» по отношению к России // Научная мысль, Ежеквартальный научно-методический журнал, №3 (29), т. 5. 2015, с. 162-166.

Հոդվածում փորձ է կատարվել տալ հայաստանյան և ադրբեջանական ինտերնետի տեղեկատվական կայքերի նախնական համեմատական պատկերը դրանցով տարածվող մշակութային ինֆորմացիայի տեսակետից:

Հետազոտության ընդհանուր բնութագրերը

Իրականացվել է առավել դիտվող մեկ հայաստանյան՝ panarmenian.net և մեկ ադրբեջանական՝ day.az կայքերի մշակութային տեղեկատվական բլոկների կոնտենտ վերլուծություն³: Վերլուծության միավորն էր մշակութային լրահոսի հոդվածը: Վերլուծվել է 300 հայկական և 270 ադրբեջանական մշակութային հոդված: Հայկական 300 միմյանց հաջորդող հոդվածները հրատարակվել են 280 օրվա ընթացքում՝ 2017թ. հուլիսի 13-ից մինչև 2018թ. ապրիլի 19-ը: Ադրբեջանական 270 հոդվածը հրատարակվել է 64 օրվա ընթացքում՝ 2018թ. մարտի 6-ից 2018թ. մայիսի 9-ը:

Աղյուսակ 1

Կայք	Հոդվածների քանակ	Դիտման միջակայք	Դիտման օրերի քանակ	Հոդված/օր
day.az	270	2018/մարտ/6 -2018/մայիս/9	280	0.96
panarmenian.net	300	2017/հուլիս/13 – 2018/ապրիլ/19	64	4.69

Դիտարկված ժամանակահատվածում day.az-ում մշակութային հոդվածների հրապարակման ինտենսիվությունը 5.2 անգամ գերազանցում էր panarmenian.net-ին:

Հաղորդագրության օբյեկտը/սուբյեկտը

Դիտարկված կայքերում հրատարակված հոդվածների բաշխումն ըստ հաղորդագրության օբյեկտի/սուբյեկտի (ինչի՞ կամ ո՞ւմ մասին է հոդվածը) տրված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հաղորդագրության օբյեկտը/սուբյեկտը	day.az	panamenian.net
Միջոցառում	43%	23%
Ստեղծագործող	30%	8%
Արտիստ	13%	25%
Գործ	4%	30%
Մշակութային ֆունկցիոներ	4%	3%
Մշակութային ենթակառուցվածք	3%	9%
Այլ	3%	2%
Ընդամենը	100%	100%

³ Կայքերի դիտելիությունը գնահատվել է Google Trends գործիքով:

Ադրբեջանական մշակութային հոդվածներում գերակշռել են մշակութային «Միջոցառման», այլ կերպ՝ մշակութային կյանքի խրոնիկայի (մշակութային բոլոր հոդվածների 43%-ը) և «Ստեղծագործողի», այլ կերպ՝ ովքե՞ր են մշակութային արժեք ստեղծողները (30%), վերաբերյալ նյութերը: Հայկական կայքում դրանք կազմել են համապատասխանաբար՝ 23% և 8%:

Մյուս կողմից, հայկական կայքում ամենամեծ մասնաբաժինն են կազմել մշակութային օբյեկտի՝ «Գործի» (30%) և «Արտիստի» (25%) վերաբերյալ հոդվածները: Կարևոր է նշել, որ հայկական կայքում «Գործերի» 75%-ը կազմել է ժամանակակից բլոկբաստերների⁴ ռեկլամը, իսկ արտիստի մասին հոդվածները ներկայացրել են ավելի շուտ նրա ռեկլամը, քան նրա մշակութային առանձնահատկությունները:

Մշակութային թեմաները

Ադրբեջանական day.az կայքի թեմատիկ կառուցվածքում առաջնահերթություններն են երաժշտությունը (բոլոր հրապարակումների 36%-ը) և գեղանկարը (24%): Ադրբեջանում գեղանկար կատեգորիայում բացարձակ գերակշռել է «*Картинная галерея*» ենթակատեգորիան, որը կազմում է գեղանկար կատեգորիայի հրապարակումների 88%-ը և բոլոր մշակութային հրապարակումների 21%-ը: Այս յուրօրինակ հրապարակումներում ներկայացված են ինչպես XIX-XX դարերի դասական, այնպես էլ ժամանակակից գեղանկարիչները և նրանց աշխատանքները: Հոդվածներում առանցքային է եղել ստեղծագործողին ներկայացնելը: Տրված է աշխատանքների մշակութաբանական վերլուծությունը «սովորական» ընթերցողի համար մատչելի, սակայն ոչ պարզունակացված լեզվով: Հրապարակումների շարքի ակնհայտ նպատակն է՝ լսարանի գեղագիտական դաստիարակությունը և գեղագիտական հորիզոնի ընդլայնումը:

Հայկական panarmenian.net կայքի մշակութային հրապարակումների համարյա կեսը՝ 47%-ը, նվիրված էր կինոյին՝ կինոֆիլմին կամ կինոարտիստին (ինչպես արդեն նշվել է՝ բլոկբաստերներին և դրանցում նկարահանված կինոարտիստներին): Երկրորդ տեղում էր երաժշտությունը՝ 27%:

⁴ Բլոկբաստեր՝ թանկարժեք գեղարվեստական կինոնկար, որը նախատեսված է զանգվածային լսարանի համար, և որի նպատակն է մեծ դրամարկղային դրամական հասույթը:

Աղյուսակ 3

Թեմա	day.az	panarmenian.net
Երաժշտություն	36%	27%
Կինո	5%	47%
Գեղանկար	24%	4%
<i>Այդ թվում՝ "Картинная галерея" Day.Az</i>	21%	-
Ցուցասրահ	6%	7%
Գրականություն	5%	2%
Թատրոն	6%	1%
Համերգասրահ	5%	2%
Ընդամենը՝ վերը տրված թեմաներ	87%	90%
Այլ թեմաներ	13%	10%
Ընդամենը	100%	100%

Ադրբեջանական կայքում՝ հայկականի համեմատ, ավելի մեծ տեղ էր հատկացված թատրոնին, գրականությանը և «համերգասրահին»: Վերջին կատեգորիայում ընդգրկվել են այն հրապարակումները, որոնցում կիզակետը հայտնի համերգասրահն է: Ընդ որում, ադրբեջանական կայքում «համերգասրահը», որպես կանոն, շաղկապված է ժողովրդական երաժշտության (մուղամ), իսկ հայկական կայքում՝ դասական երաժշտության համերգներին:


Երաժշտական թեմայով հրապարակումների համեմատական պատկերը հետևյալն է: Ադրբեջանական կայքում դասական երաժշտությանը նվիրված է բոլոր երաժշտական հրապարակումների 81%-ը (այդ թվում՝ ազգային դասական երաժշտությանը՝ 57%, համաշխարհային դասական երաժշտությանը՝ 25%), իսկ հայկական կայքում՝ 71%-ը (ազգային դասական՝ 28%, համաշխարհային դասական՝ 43%): Ադրբեջանական կայքում զանգվածային երաժշտությանը նվիրված է երաժշտական հրապարակումների 12%-ը, իսկ հայկական կայքում՝ երեք անգամ ավելի (35%): Ադրբեջանական կայքում ժողովրդական երաժշտությանը նվիրված է հրապարակումների՝ 23%-ը, իսկ հայկական կայքում՝ ընդամենը 2%-ը:

Մշակույթի տիպի, ազգային և այլ երկրների մշակույթների ներկայացվածությունը

Հետազոտությունում դիտարկվել է կայքերում դասական, զանգվածային, ժողովրդական և հոգևոր մշակույթների ներկայացվածությունն ինչպես ազգային, այնպես էլ այլ ազգերի մշակույթների վերաբերյալ հրապարակումներում:

Տվյալները ցույց են տալիս, որ, ընդհանուր առմամբ, ադրբեջանական կայքը հակված էր ներկայացնելու դասական և ժողովրդական մշակույթը (Գծապատկեր 1): Ընդ որում, բացարձակ գերիշխում էր դասական մշակույթը (այն առկա էր ադրբեջանական կայքի բոլոր հրապարակումների 63%-ում): Հայկական կայքում շեշտադրված են զանգվածային (47%) և դասական (44%) մշակույթները:

Գծապատկեր 1



Ինչ վերաբերում է ազգային և այլ ազգերի (այլ ոչ վերազգային) մշակույթի համատեքստում մշակութային տիպերի ներկայացվածությանը, ապա հայկական և ադրբեջանական կայքերի համեմատական պատկերը տրված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Մշակույթի տիպը	Ազգային մշակույթ		Այլ երկրների մշակույթ	
	day.az	panarmenian.net	day.az	panarmenian.net
Դասական	35%	28%	36%	23%
Զանգվածային	12%	5%	10%	44%
Ժողովրդական	13%	4%	3%	2%
Հոգևոր	-	1%	-	0%
Ընդամենը նույնականացված մշակութային դասակարգմամբ	60%	38%	49%	69%
Մշակութային տիպը չի նույնականացվել	40%	62%	51%	31%
Ընդամենը	100%	100%	100%	100%

Ադրբեջանական կայքի բոլոր հրապարակումների 60%-ում առկա է ազգային մշակույթի վերաբերյալ հոդված, իսկ հայկական կայքի հրապարակումների՝ միայն 38%-ում: Ադրբեջանական կայքն ավելի է հակված հրատարակելու ազգային դասական, զանգվածային և ժողովրդական հոդվածներ, քան հայկական կայքը:

Ադրբեջանական կայքը չի հրապարակել հոգևոր մշակույթի վերաբերյալ որևէ հոդված: Հայկական կայքում հոգևոր մշակույթին է նվիրված հրապարակումների 1%-ը:

Այլ երկրների մշակույթի ոլորտում ադրբեջանական կայքը հակված էր ներկայացնել առավելապես դասական մշակույթը (բոլոր մշակութային հոդվածների 36%-ը), իսկ հայկական կայքը՝ զանգվածային մշակույթը (44%):

Մշակութային հրապարակումների աշխարհագրական ընդգրկումը

Մշակութային հրապարակումների աշխարհագրական բաշխումը տրված է Աղյուսակ 5-ում: Տվյալները ցույց են տալիս, որ ադրբեջանական կայքի մշակութային հրապարակումների աշխարհագրական կիզակետը Ադրբեջանն է, որի հիշատակումն առկա է եղել բոլոր մշակութային հրապարակումների 66%-ում: Նույնը վերաբերում է նաև հայկական կայքին, որում, սակայն, Հայաստանի հիշատակումն առկա է եղել հրապարակումների 35%-ում: Անսպասելի արդյունք է այն, որ հայկական կայքում երկրորդ տեղում է ԱՄՆ-ը (19%, ինչը պայմանավորված է բլոկֆաստերների հիմնականում ամերիկյան ծագմամբ), իսկ ադրբեջանականում՝ Ֆրանսիան (10%, ինչը պայմանավորված է եղել հիմնականում «*Картинная галерея*» ենթակատեգորիայի հրապարակումների մեծ քանակով, որտեղ հրապարակվել են ֆրանսիական գեղանկարի գործերը):

Գլոբալ (վերազգային) մշակույթի առկայությունը

Առանձին գնահատվել է գլոբալ մշակույթի ներկայացվածությունը: Հարկ է նշել, որ նույն հոդվածում կարող էր ներկայացված լինել նաև ազգային կամ այլ նույնականացված ազգի, նաև գլոբալ մշակույթը: Դրանք կողավորվել են միմյանցից անկախ:

Ադրբեջանական կայքում գլոբալ մշակույթի տարրեր են պարունակվել հոդվածների 10%-ում, այն դեպքում, երբ հայկական կայքի հրապարակումների 44%-ում:

Ինֆորմացիոն պատերազմ

Ադրբեջանի և Հայաստանի միջև տոտալ հակամարտությունն ինտենսիվորեն արտահայտվում է ինֆորմացիոն դաշտում: Հետազոտությունում գնահատվել է, թե արդյոք այն արտահայտվել է նաև մշակութային հրա-

պարակումներում: Պարզվել է, որ այդ երևույթն առկա է, սակայն շատ փոքր չափով: Ադրբեջանական կայքի հրապարակումներում ինֆորմացիոն պատերազմի տարրեր են դիտարկվել հրապարակումների 3%-ում, իսկ հայկական կայքի հրապարակումների 1%-ում:

Աղյուսակ 5

Երկիր	Day.az	panamenian.net	Ընդամենը
Ադրբեջան	66%	0%	31%
Հայաստան	0%	35%	19%
ԱՄՆ	3%	19%	12%
Երկիրը չի նույնականացվել	0%	13%	7%
Ֆրանսիա	10%	3%	7%
Ռուսաստան	3%	10%	6%
Անգլիա	1%	3%	2%
Վրաստան	1%	3%	2%
Լեհաստան	3%	0%	1%
Ընդամենը՝ վերը նշված	87%	86%	87%
Այլ երկրներ	13%	14%	13%
Ընդամենը	100%	100%	100%

day.az կայքի թեմաների դիտումները

Ադրբեջանական կայքի հոդվածներն ունեցել են դիտումների քանակի հաշվիչներ, ինչը թույլ է տվել ստանալ այդ կայքի հրապարակումների («Ժողովրդականության») ցուցանիշներ: Աղյուսակ 6-ում տրված են այդ ցուցանիշները կայքի թեմատիկ բաշխման համար, այդ թվում՝ տվյալ թեմայով հրապարակումների բացարձակ քանակը, դիտումների միջին քանակը և դիտումների ընդհանուր քանակը: Աղյուսակում տվյալները դասավորված են ըստ տվյալ թեմայի հրապարակումներում դիտումների միջին քանակի նվազման:

Եթե պայմանականորեն համարենք, որ դիտումների բացարձակ քանակը շաղկապված (կորելացված) է տվյալ թեմայի հրապարակումների ազդեցության չափի հետ, ապա պետք է ենթադրել, որ ադրբեջանական կայքի ազդեցության բնույթը հիմնականում կազմավորվում է երաժշտական, «*Картинная галерея*» շարքի և թատրոնի վերաբերյալ հրապարակումներով: Հաշվի առնելով վերոշարադրյալ վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ ադրբեջանական կայքն իր լսարանը սոցիալականացնում է ազգային (մասնավորապես՝ երաժշտական և թատրոնի մասին հրապարակումներ) և դասական (մասնավորապես՝ գեղանկար և թատրոնի մասին հրապարակումներ) մշակույթներում:

Աղյուսակ 6

Քեմաներ	Հասարակական կառույցներ	Ղեկավարների միջին քանակը	Ղեկավարների ընդհանուր քանակը
Հուշարձաններ	1	5,216	5,216
Թատրոն	15	2,573	38,591
Գեղարվեստ	7	2,490	17,428
Պար	8	2,229	17,833
Ճարտարապետություն	1	2,152	2,152
Երաժշտություն	97	1,693	164,206
Շուր	9	1,599	14,388
Քանդակ	1	1,422	1,422
Գեոգրաֆիկություն	4	1,388	5,552
Մշակութային կյանք	4	1,380	5,518
Երկր	13	1,344	17,474
Ճանաչողական	15	1,319	19,781
Գրականություն	14	1,298	18,172
Արվեստի պարզ	5	1,278	6,391
Պիլա	2	1,022	2,044
Իլլուստրացիա	1	953	953
Նամակագրական	13	941	12,227
Եվրոպական պոլիտ	2	892	1,783
Իրավունք	1	872	872
"Корпусом неслена" Day.Az	57	802	45,733
Շուրաներ	270	1,473	397,736

Աղյուսակի ուշագրավ տարր է այն, որ «հուշարձաններ» կատեգորիայի ընդամենը մեկ հրապարակման դիտումների քանակը 5,216 է: Այդ փաստն արժանի էր առանձին դիտարկման, որը բացահայտեց կարևոր արդյունք: Հուշարձանների մասին հրապարակման վերնագիրն էր՝ «Международная рабочая группа ученых начинает беспрецедентный проект в Азербайджане» (<https://news.day.az/society/997249.html>): Հրապարակման հիմնական բովանդակությունն այն է, որ Ադրբեջանի Կովկասի պատմության կենտրոնի նախաձեռնությամբ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հոգևոր ավանդույթների համեմատական ուսումնասիրությունների ամբիոնի աջակցությամբ, կազմավորվել է գիտնականների միջազգային խումբ (Ադրբեջան, Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Ղազախստան, Թուրքիա), որը զբաղվելու է Ադրբեջանում պատմական հուշարձանների անձնագրավորման, ուսումնասիրության և վերականգնման հարցերով: Ծրագրի նախնական փուլը սկսվելու էր 2018թ. ապրիլին՝ Արևմտյան Ադրբեջանի տարածքից: Անձնագրավորվելու էին հնագույն հուշարձանները, գերեզմանատները, «դոչդաշները» (հայկական խոյարձանները) և

սրբատեղիները: Աշխատանքային խումբը մտադիր է ընդլայնել համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Թյուրքական մշակույթի և ժառանգության հիմնադրամի, այլ միջազգային կազմակերպությունների, ադրբեջանական պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ, որոնք մասնագիտացված են պատմական հուշարձանների ուսումնասիրության և պահպանման հարցերում:

Հատկանշական է, որ հրապարակումն առաջին անգամ դիտարկելու օրվանից (2018թ. մայիսի 7) մինչև 2018թ. հոկտեմբերի 20-ը հոդվածի դիտումների քանակն աճել է 5,216-ից մինչև 5,842, այսինքն՝ 6 ամսում աճել է 620-ով կամ՝ 12%-ով:

Եզրակացություններ

Վերը շարադրված տվյալները ցույց են տալիս, որ ադրբեջանական day.az ինտերնետային կայքն իրականացնում է հստակ արտահայտված ազգակերտման՝ **ազգի ինքնության կազմավորման և զարգացման**, ինչպես նաև ազգի մշակութային զարգացման քաղաքականություն: Այդ քաղաքականության հիմնական բովանդակությունն է՝ ազգի մշակութայնացումը (մշակութային սոցիալականացումը) ազգային-ավանդական, ազգային դասական և համաշխարհային դասական մշակույթներում:

Հայկական panarmenian.net կայքի մշակութային քաղաքականության հիմնական ուղղությունն է՝ առևտրայնացած մշակույթի ինֆորմացիոն-ռեկլամային սպասարկումը: Այդ քաղաքականությունը բնական կերպով շաղկապված է գլոբալ զանգվածային մշակույթի հետ, որի էքսպանսիան տեղի է ունենում ամբողջ աշխարհում: Այն խարխլում և կազմալուծում է ազգային ինքնությունը՝ փոխարենը կազմավորելով **գլոբալ զանգվածային մշակույթին** պատկանող աշխարհաքաղաքացու էկլեկտիկ ինքնությունը:

Հետևաբար, ադրբեջանական կայքի մշակութային քաղաքականությունը նպաստավոր է Ադրբեջանի ազգային անվտանգության տեսակետից, իսկ հայկական կայքինը՝ սպառնալիքներ է առաջացնում Հայաստանի ազգային անվտանգության համար:

Առանձնահատուկ պետք է նշել, որ հոդվածում տրված նկարագիրը չի ներկայացնում հայկական և ադրբեջանական ինտերնետի մշակութային քաղաքականության ամբողջական պատկերը: Դրա համար անհրաժեշտ է վերլուծել շատ ավելի ընդգրկուն նախնական տվյալների շտեմարան:

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաս Ա. Ուղեծրային խմբավորում, արբանյակային տեղորոշման ցանց

Արա Հ. Մարջանյան՝

Ներկայում Ղազախստանի Հանրապետության (ՂՀ) արբանյակային ունակությունները կազմված են.

- արբանյակների ուղեծրային խմբավորումից՝ 4 ակտիվ արբանյակ,
- արբանյակների ղեկավարման վերգետնյա ենթակառուցվածքից:

ՂՀ ուղեծրային խմբավորումը կազմող 4 ակտիվ արբանյակներից երկուսն են Կապի ու Հեռահաղորդակցության (ԿՀ) արբանյակները («Kazsat-2» և «Kazsat-3», տես՝ *Նկ. 1* և *Աղյուսակ 1*)՝ տեղակայված գեոստացիոնար ուղեծրում: Այս արբանյակները գտնվում են ՂՀ Կոսմիկական կապի կենտրոն (ՂՀ ԿԿԿ)¹ բաժնետիրական ընկերության ենթակայության տակ: Մյուս երկուսը՝ Հետախուզական և Երկրի հեռագնման (ՀԵՀ) «KazEOSat-1», «KazEOSat-2» արբանյակներն են՝ տեղակայված ցածր, արևասինքրոն, ուղեծրում (տես՝ *Նկ. 2* և *Աղյուսակ 2*): Այս արբանյակները գտնվում են ՂՀ Կոսմիկական գործակալությունում՝ «Қазақстан Ғарыш Сапары» Ազգային բաժնետիրական ընկերության («KFC» ԱԲԸ)² ենթակայության տակ, նախկինում՝ ՂՀ «KazCosmos» գործակալություն: Թեև, ֆորմալ առումով, ՂՀ բարձր ճշգրտության արբանյակային տեղորոշման (ԲՃԱՏ) ցանցը չի հանդիսանում ՂՀ ուղեծրային խմբավորման մաս, այնուամենայնիվ, ամբողջականության համար այն դիտարկվում է ստորև (տես՝ *Քարտեզ 1*): Հավելենք, որ սկսած 2016-ից՝ այս բոլոր կառույցները գործում են ՂՀ պաշտպանական և աերոկոսմիկական արդյունաբերության նախարարության (ՊԱԱՆ) Աերոկոսմիկական կոմիտեի ենթակայության տակ:

ՂՀ վերգետնյա արբանյակային ենթակառուցվածքը և սեփական արբանյակների ստեղծման հզորությունները կդիտարկվեն սույն հոդվածի հա-

¹ «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ.:

² АО «Республиканский центр космической связи».

² Акционерное общество «Национальная Компания Қазақстан Ғарыш Сапары» (АО «НК «KFC»).

ջորդ մասում: Մեր դիտարկումներից դուրս են գտնվում նաև ուղեծրային արձակումների ՂՀ սեփական կարողությունների գննությունը, մարդավարական կոսմոնավտիկան ու տիեզերագիտության ոլորտը, ինչպես նաև ՂՀ կոսմիկական գործունեության ընդհանուր վելուծությունը, դրա ձևավորման առանձնահատկությունների ու աշխարհաքաղաքական տրամաբանության քննությունը: Այս հարցերը կդիտարկվեն առանձին հոդվածում:

1. Կապի և Հեռահաղորդակցության (ԿՀ) արբանյակներ

Ղազախստանում ԿՀ արբանյակային կարողությունների ստեղծման մեկնարկը տրվել է 2004թ. մարտի 18-ին, երբ ՂՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 30-ի №1355 որոշման հիման վրա հիմնադրվեց ՂՀ Կոսմիկական կապի կենտրոն բաժնետիրական ընկերությունը (АО ПЛКК): Մինչև 2018թ. նոյեմբերի սկիզբ արձակվել է ՂՀ երեք ԿՀ արբանյակ, երեքն էլ մշակված ու արտադրված ՌԴ ընկերությունների կողմից և արձակված ՂՀ տարածքում գտնվող և ՌԴ-ին պատկանող «Բայկոնուր» («Տյուրատամ») կոսմոդրոմից: Այս արբանյակների տեխնիկական և այլ մանրամասներն ամբողջացրել ենք *Աղյուսակ 1*-ում:

Ղազախստանի ԿՀ առաջին՝ «KazSat-1» արբանյակի մշակումը և մոնտաժը սկսվել էր 2004-ի գարնանը: Արձակումը նախատեսվում էր 2005թ. դեկտեմբերի 29-ին՝ ՌԴ «Протон-М» ծանր դասի կրիչի և «Бриз-М» բուլթերի³ միջոցով: Իրական արձակումն իրականացվեց 2006թ. հունիսի 17-ին: Թեև «KazSat-1» արբանյակի երաշխավորված շահագործման ժամկետը 12 տարի էր, սակայն արդեն 2008թ. հունիսին, արձակումից մոտ 2 տարի հետո, խափանվեց արբանյակի հեռահաղորդակցական (ՀՀ) մոդուլը: 2009թ. նոյեմբերին արբանյակը դուրս բերվեց գեոստացիոնար արբանյակների «թաղման» ուղեծիր ու հանվեց շահագործումից: ԿՀ երկրորդ՝ «KazSat-2» արբանյակի մշակումը սկսվել էր 2006-ին, արձակումը նախատեսվում էր 2009-ին: Աշխատանքների երկարաձգման հետևանքով արձակումը հետաձգվեց նախ մինչև 2010թ. դեկտեմբեր, հետո՝ 2011թ. առաջին եռամսյակ, և վերջապես՝ 2011թ. հուլիսի 15-ին: «KazSat-2» արբանյակի երաշխավորված շահագործման ժամկետը նույնպես 12 տարի էր: Սակայն 2017թ. մարտին արբանյակի աշխատանքը ժամանակավորապես խափանվեց, ինչի հետևանքով կապի և հեռուստատեսային 13 օպերատոր ժամանակավորապես դադարեցրեց աշխատանքը: ԿՀ երրորդ՝ «KazSat-3» արբանյակի վրա աշխատանքները մեկնարկեցին

³ Разгонный модуль, Booster.

2011թ. հունիսին, իսկ արձակումն իրականացվեց 2014թ. ապրիլի 28-ին: «KazSat-2» արբանյակի 2017թ. խափանումից հետո հեռահաղորդակցական հիմնական հոսքը վերուղորդվեց «KazSat-3» արբանյակի վրա:

Աղյուսակ 1

ՂՀ Կապի ու Հեռահաղորդակցման արբանյակների պարամետրերը

	Kazsat-1	Kazsat-2	Kazsat-3
Արձակում	17.06.2006	15.07.2011	28.04.2014
Կրիչ	Протон-К, Блок-DM3	Протон-М, РБ Бриз-М (Ph.3)	
Կոսմոդրոմ	Բայկոնուր, Հար.200, ԱԿ №39	Բայկոնուր, Հար.200, ԱԿ №39	Բայկոնուր, Հար.81, ԱԿ №24
Երաշխ. ժամկետ	12 տարի	12 տարի	15 տարի
Կարգավիճակ	Խափանվել է 2008-ի հունիսին: «Թաղման» ուղեծիր է հանվել 2009-ի նոյեմբերին	Ժամանակավոր խափանվել է 2017թ. մարտին: Շահագործվում է	Շահագործվում է
Արտադրող	Հենրային մոդուլ - «ГКНПП им. Хруничева», ՌԴ Հեռահաղորդակցման մոդուլ (ՀՀ) - «ФГУП «Космическая связь», ՌԴ		Հենրային մոդուլ - АО «ИСС им. Решетнёва», ՌԴ; ՀՀ մոդուլ - Thales Alenia Space (Ֆրանսիա - Իտալիա)
Հենքը	«Яхта» (մոդիֆիկացված)		«Экспресс-1000 HTA»
Կոնեկցիոն շարժիչ	СПД-70 ստացիոնար պլազմայի շարժիչ, քսենոնի վրա Արտադրված՝ «ОКБ Факел» (ք. Կալինինգրադ, ՌԴ)		СПД-100, քսենոնի վրա
Տրանսպոնդերներ	Ku հաճախային 12 ակտիվ փող (8 կապ, 4 TV)	Ku հաճախային 16 ակտիվ փող (12 կապ, 4 TV), և 4 պահեստային	Ku- հաճախային առնվազն 28 ակտիվ փող
Հզորություն, սնուցում	1.3 կՎտ, 2 բացվող սեկցիոն ՖՎ պանել	1.8 կՎտ, 2 բացվող սեկցիոն ՖՎ պանել	5.5 կՎտ, 2 բացվող սեկցիոն ՖՎ պանել
Զանգված	892 կգ, որից 180 կգ ՀՀ մոդուլ	1330 կգ	?
«Կախման» կետ	103° E	86.5° E	58.5° E
NORAD ինդեքս	29230	37749	39728

2017թ. հունիսի 5-ին ՂՀ ՊԱԱՆ նախարար Բ.Ատմակուլովը հայտնեց, որ 2023-ին նախատեսվում է արձակել ՂՀ չորրորդ՝ «KazSat-2R» ՀՀ արբանյակը⁴: Այն, ամենայն հավանականությամբ, պետք է փոխարինի ՀՀ «KazSat-2» արբանյակին: Ավելի վաղ, 2017թ. մարտի 30-ին, հայտնի դարձավ, որ ՂՀ պաշտոնական պատվիրակությունը ՌԴ Ռեշետնյովի անվան

⁴ <http://khabar.kz/ru/news/obshchestvo/item/82913-k-2023-godu-planiruetsya-sozdat-sputnik-kazsat-2r-v-kazakhstane>

ԱԻՀ ընկերության⁵ հետ նախնական բանակցություններ է սկսել դազախական նոր ԿՀ արբանյակի մշակման և պատրաստման համար⁶: Դիտարկվում է նաև «KazSat-2R» ԿՀ արբանյակը Ղազախստանում հավաքելու հնարավորությունը՝ դազախա-ֆրանսիական «Ղալամ» համատեղ ձեռնարկությունում⁷:

2. Հետախուզական և Երկրի հեռագնման (ՀԵՀ) արբանյակներ

Դատելով բաց աղբյուրներից՝ կարելի է եզրակացնել, որ Ղազախստանում ՀԵՀ արբանյակային բաղադրիչով աշխատանքների մեկնարկը տրվել է 2005-ին, երբ ընդունվեց ՂՀ կոսմիկական առաջին պետական ծրագիրը, որտեղ ամրագրվել էր հանրապետությունում ՀԵՀ արբանյակային ունակությունների ստեղծման անհրաժեշտությունը [1]: 2006-ին ՂՀ «Կազկոսմոս» Ազգային կոսմիկական գործակալության կողմից իրականացվեց միջազգային մրցույթ ՂՀ-ում ՀԵՀ արբանյակային բաղադրիչի ստեղծման ուղղությամբ: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվեց ՌԴ Կոսմիկական սարքաշինության գիտահետազոտական ինստիտուտը (ԿՍԳՀԻ)⁸: Սակայն, ՂՀ իշխանական օղակների որոշ հատվածների ճնշման արդյունքում մրցույթի արդյունքները չեղարկվեցին՝ «ԿՍԳՀԻ առաջարկների տեխնիկապես անընդունելիության հետևանքով»⁹:

Միջազգային նոր մրցույթն իրականացվեց 2008թ. մարտին, որին մասնակցեցին ընկերություններ աշխարհի 26 երկրներից, այդ թվում՝ Ֆրանսիայից, Կանադայից, Ճապոնիայից և Հնդկաստանից: Հաղթող ճանաչվեց ֆրանսիական *EADS Astrium* ընկերությունը¹⁰, «ընկերության ՀԵՀ ասպարեզում բարձրտեխնոլոգիական հասունության և այս ասպարեզում հաջող փորձի հետևանքով»: Այս որոշումն ամրապնդվեց 2009-ին, Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի¹¹ (Ադրբեջան և) Ղազախստան հոկտեմբերին կատարված պաշտոնական այցի ընթացքում: Հենց այս այցի ժամանակ պաշտոնապես հայտարարվեց *EADS Astrium* ընկերության հաղթանակը: Մեզ հետաքրքրող համատեքստում նշենք, որ այս այցի ընթացքում

⁵ АО «Информационные спутниковые системы» имени академика М.Ф. Решетнёва.

⁶ <https://regnum.ru/news/it/2256616.html>

⁷ ТОО «Фалам», դրա մասին տե՛ս սույն հոդվածի 2-րդ մասում:

⁸ Научно-исследовательский институт космического приборостроения (РНИИКП).

⁹ <http://expert.ru/kazakhstan/2009/40/kosmos/>

¹⁰ 2013-ից *Airbus Space Defence* ֆրանսիական կորպորացիայի կազմում:

¹¹ Ն.Սարկոզիի պետական այցը Հայաստան 2009-ին, որի հնարավորության մասին լուրեր տարածվեցին դեռ 2009-ի գարուն-ամռանը, այդպես էլ չկայացավ: <http://www.panarmenian.net/>

Աղյուսակ 2

Ղազախստանի ՀԵՀ արբանյակների պարամետրերը

	KazEOSat-1	KazEOSat-2
Ճշգրտության դաս	Բարձր դասի ՀԵՀ արբանյակ	Ցածր դասի ՀԵՀ արբանյակ
Պատրաստող	Airbus D&S/EADS Astrium, Թուրուզ, Ֆրանսիա	Airbus D&S/EADS Astrium/SSTL, Սուրեյ, Անգլիա
Երաշխավորված ժամկետ	7.25 տարի (նսմինալ)	7 տարի
Ներկայիս վիճակը	շահագործում	շահագործում
Արձակման տարեթիվը, կոսմոդրոմը (վայրը), հրթիռային կրիչը	2014թ. ապրիլի 30. «Կուռու» (Ֆրանսիական Գայանա), <i>Arianespace Vega (VV03)</i>	2014թ. հունիսի 19. «Ясный» (Օրենբուրգ, ՌԴ), «Днепр-1» (SS-18 «Satan»)
Արձակման զանգված	830 կգ	Մոտ 185 կգ
Ուղեծրային էլեկտրական հզորություն	1200 Վտ	55 Վտ
Չափեր	2.1 մ x 3.7 մ x ? մ	0.7 մ x 0.8 մ x 0.9 մ
Ուղեծիր	Արևասինքրոն (Պ 757.9 կմ, Ա 760.0 կմ): Թեքում՝ 98.4°, Պտույտ՝ 99.9 րոպ., Հիմն. առանցք 7129 կմ	Արևասինքրոն (Պ 619.4 կմ, Ա 640.5 կմ): Թեքում՝ 97.9°, Պտույտ՝ 97.2 րոպ., Հիմն. առանցք 7000 կմ
Օպտիկական հիմնական գործիք	<i>EADS Astrium</i> ընկերության NAOMI գործիք՝ 650 մմ ապերտուրով Կորշի հեռադիտակ	<i>Spaceborne</i> ընկերության Scanner-56 գործիք՝ 145 մմ ապերտուրով <i>Jena-Optronik</i> լուսանկարչական սարք
Տարածական լուծում	0.75-1.0 մ (պանիքրոմատիկ), 4.0 մ (բազմասպեկտրալ)	6.5 մ
Լուսանկարման շերտը (կմ), օրական ծածկույթը (կմ ²)	20 կմ 220 000 կմ ²	77 կմ 1 000 000 կմ ²
NORAD ինդեքսը	39731	40010

ստորագրվեց ղազախա-ֆրանսիական երկու միջպետական համաձայնագիր¹²: Ըստ առաջինի՝ հիմնվում է ֆրանկո-ղազախական կոսմիկական գործունեության իրավական բազան և ստեղծվում են *EADS Astrium* ընկերության տեխնոլոգիաների փոխանցման հիմունքները: Ըստ երկրորդի՝ ՂՀ կառավարությունը պարտավորվում է ՀԵՀ արբանյակային բաղադրիչի և սեփական արբանյակային ունակությունների ստեղծման *СБИК КА* ծրագրի իրականացման համար ֆրանսիական կողմին տրամադրել արտոնություններ և երաշխիքներ (տե՛ս սույն հոդվածի 2-րդ մասում):

¹² ՂՀ-ի համար այս պատմական այցի ընթացքում ստորագրվեց 24 համաձայնագիր՝ ընդհանուր մոտ \$6 մլրդ արժողությամբ, այդ թվում և ՂՀ «*КазМунайГаз*», և Ֆրանսիական «*Total*» ու «*Gas de France*» ընկերությունների միջև եռակողմ համաձայնագիրը Կասպիցի շելֆում գտնվող «*Хвалынской*» նավթագազային դաշտի յուրացման համար. ֆրանսիական ընկերությունները կունենան ծրագրի 25% մասնաբաժինը (այս ծրագրի 4-րդ մասնակիցը ՌԴ «*Лукойл*» ընկերությունն է):

Նկար 1

ՂՀ «KazEOSat-1», Ադրբեջանի «Spot-7» (Azerskay) ՀԵՀ արբանյակները, ՂՀ «KazEOSat-2» ՀԵՀ «նանոարբանյակը» (աջից)



Աղբյուրը՝ Airbus SD/EADS Astrium, Surrey Satellite Technology Ltd.

Մասնավորապես, 2009թ. հոկտեմբերի 6-ին EADS Astrium ընկերության նախագահ Ֆ.Աուկի (*Francois Auque*) և ՂՀ Կոսմիկական գործակալության («Kazakhstan Gharysh Sapery») նախագահ Գ.Մուրզակուլովի (*Gavvyllatyp Murzakulov*) միջև կնքվեց ՀԵՀ արբանյակներին առնչվող պայմանագիր: Ստորագրման արարողության ժամանակ պրն Աուկը մատնանշեց. «Այս արբանյակները Ղազախստանին լայն հնարավորություններ կընձեռեն քաղաքացիական նշանակության (*civil applications*) միջառք ասպարեզներում, ինչպիսիք են բնական պաշարների և գյուղատնտեսական հողերի մշտադիտարկում, քարտեզագրում և բնական աղետներին արագ արձագանքում»¹³:

Ավելի քան €260 մլն արժողությամբ ՂՀ առաջին՝ «KazEOSat-1» բարձր ճշտության դասի ՀԵՀ արբանյակն արձակվեց 2014թ. ապրիլի 30-ին՝ «Կուռու» կոսմոդրոմից, երկրորդ՝ ցածր դասի «KazEOSat-2» ՀԵՀ «նանոարբանյակը»՝ ՌԴ «Յասնի» հրթիռային բազայից: Աղյուսակ 2-ում բե-

¹³ <http://spacenews.com/astrium-inks-two-satellite-deal-kazakhstan/>

րում ենք այս արբանյակների հիմնական բնութագրերը, իսկ Նկ. 1-ում՝ դրանց լուսանկարները: Համեմատության համար նույն նկարում բերվում է նաև Ադրբեջանի առաջին՝ «SPOT-7» («Azerskay-1») ՀԵՀ արբանյակի լուսանկարը¹⁴, կատարված նույն վայրում՝ EADS Astrium ընկերության ուղղագիծ մոնտաժի «մաքուր սենյակում»: Նկարում կարմիր սլաքներով նշված են արբանյակների օպտիկական գործիքները: Աղյուսակ 3-ում համեմատվում են Ադրբեջանի և Ղազախստանի ՀԵՀ արբանյակային ծրագրերը և ունակությունները:

Աղյուսակ 3

Ադրբեջանի և Ղազախստանի ՀԵՀ արբանյակային ունակությունների համեմատական աղյուսակ

	Ադրբեջան	Ղազախստան
ՀԵՀ մարմին	«Azerkosmos» ԲԲԸ, հիմնադրված է 2010թ.:	«Kazkosmos» ԲԸ, հիմնադրված 2005թ., վերանվանված 2007-ին:
Առաջին ՀԵՀ արբանյակ, արձակումը, կրիչը, վայրը	SPOT-7 («Azerskay-1»), 2014թ. հունիսի 30, PSLV-C23, Շրիհարիկոտա, Հնդկաստան	KazEOSat-1, 2014թ. ապրիլի 30, Arianespace Vega Կուռու, Ֆրանսիական Գայանա:
Ռազմավարական գործընկեր	Ֆրանսիական Airbus SD/Astrium ընկերություն, Իսրայել (?)	Ֆրանսիական Airbus SD/Astrium ընկերություն
Լուծումը (մ), Վերադարձի ժամկետը (օր, ժամ)	1.5 մ («Spot-7») 2 օրը մեկ (միայն «Spot-7»)	0.75 մ («KazEOSat-1») 2 օրը մեկ
ՀԵՀ արբանյակային իրական համաստեղություն	Այո (Spot-6 և 7 զույգ, հավանաբար նաև Pleiades 1a և 1b արբանյակներ): Փաստված է Թուրքիայի, Բելառուսի և Ղազախստանի հետաքրքրվածությունն Ադրբեջանի ՀԵՀ ունակություններով	Ոչ: Փաստված է Ղազախստանի հետաքրքրվածությունն Ադրբեջանի ՀԵՀ ունակություններով

Հավելենք, որ ի հակադրություն պրն Ֆ.Աուկի՝ 2009թ. հոկտեմբերի 6-ին արված հայտարարության (տե՛ս վերը)՝ ՂՀ ՊԱԱՆ-ի կողմից ՀԵՀ արբանյակներին վերապահվում է հստակ դերակատարում պաշտպանության և անվտանգության ասպարեզներում: Դրանք են.

1. Տոպոգրաֆիիկ և թեմատիկ խոշորամասշտաբ քարտեզագրում, տվյալների բազաների ստեղծում և նորացում
2. Ռելիեֆի եռաչափ թվային մոդելների պատրաստում
3. Ռազմավարական և ռազմական օբյեկտների ենթակառուցվածքների վիճակի հսկում

¹⁴ Ադրբեջանի արբանյակային ունակությունները դիտարկված են [2-3]-ում:

4. Մերձսահմանային տարածքների հետախուզում
5. Ճգնաժամային իրավիճակների և ռազմական կոնֆլիկտների գոտիների հետախուզում
6. Մերձափնյա գոտիներում նավարկության հետախուզում
7. Հատուկ նշանակության գործողությունների իրականացման տարածքների հսկում և հետախուզում:

3. Բարձր ճշգրտության արբանյակային տեղորոշում

Այս բաղադրիչով գործունեության պաշտոնական մեկնարկը տրվել է 2012թ. մայիսի 5-ին, երբ ՂՀ կառավարության № 721 որոշմամբ հաստատվում է «ՂՀ ողջ տարածքում բարձր ճշգրտության արբանյակային նավիգացիայի վերգետնյա ենթակառուցվածքի ստեղծում» ծրագիրը՝ նախատեսված մինչև 2015թ. համար¹⁵: ՂՀ կառավարության 2012թ. մայիսի 31-ի №721 որոշմամբ Ազգային ընկերություն «ԿԲՇ» ԲԸ-ն¹⁶ նշանակվեց ողջ ՂՀ տարածքում ԲՃԱՏ ծառայությունների տրամադրման ազգային օպերատոր¹⁷: ԱԸ «ԿԲՇ» կազմում ձևավորվեց ԲՃԱՏ համակարգերի կենտրոն¹⁸:

Ծրագրի նպատակն է ՂՀ ողջ տարածքում ապահովել «կոորդինատա-ժամանակային և նավիգացիոն որակյալ ծառայությունների երաշխավորված մատուցում արբանյակային նավիգացիոն համակարգերի տվյալների սպառողների համար»: Ընդ որում, ԲՃԱՏ բաղադրիչով ՂՀ ապահաստանը չունի, և դատելով բաց աղբյուրներից՝ չի պատրաստվում ստեղծել սեփական գլոբալ նավիգացիոն արբանյակների խմբավորում, այլ օգտագործում է (պատրաստվում է օգտագործել) ՌԴ, ԱՄՆ և ԵՄ խմբավորումները¹⁹:

ՂՀ ԲՃԱՏ համակարգի տվյալների կիրառման հիմնական ոլորտներն են.

- Ճշգրիտ քարտեզագրում և գեոդեզիա;
- Հողօգտագործում և կադաստր;
- գյուղատնտեսություն;
- ամեն եղանակի համար բարձր ճշգրտության նավիգացիա;
- շինարարություն;

¹⁵ «Создание наземной инфраструктуры системы высокоточной спутниковой навигации Республики Казахстан» (СВСН РК).

¹⁶ Акционерное общество «Национальная Компания КБС» (АО «НК «КБС»).


¹⁷ <http://gharysh.kz/projects/svsn-rk/>

¹⁸ Центр системы высокоточной спутниковой навигации АО «НК «КБС».

¹⁹ ГЛОНАСС, GPS, NAVSTAR, GALILEO. <http://svsn.kz/index.html>

Քարտեզ 1

Ղազախստանի ԴԱԿ ցանաքային ցանցը՝ տարածաշրջանային և լոկալ կայաններ: Բերվում են նաև ծովային ԴԱԿ-ը և նրա ծածկման տիրույթը (ընդհատ շրջանագիծ)



- ճանապարհային տրանսպորտի ղեկավարում, հուսքերի և երթուղիների օպտիմիզացիա;
- շինությունների ղեֆորմացիայի մոնիթորինգ (կամուրջներ, ամբարտակներ, ռելսային ուղիներ և այլն);
- երկրակեղևի ղեֆորմացիայի ֆիքսում;
- երկրաբանական աշխատանքներ և տրասսավորում;
- ազգային անվտանգություն:

Ներկայում ՂՀ տարածքում տեղակայված է մոտ 60 դիֆերենցիալ արբանյակային կայան (ԴԱԿ, տե՛ս Քարտեզ 1), որոնք իրականացնում են կոորդինատա-ժամանակային և նավիգացիոն ծառայություններ: Տարածական ճշգրտությունը ժամանակի իրական մասշտաբում՝ մոտ 1մ DGPS ծառայության ռեժիմում²⁰, մոտ 2 սմ՝ RTK ծառայություն²¹, և մոտ 1 սմ՝ PP ծառայություն²², վերանշակման ժամանակային ռեժիմում: Բացի այս, 2014-ին Կասպից ծովի ափին «Баутино» ավանում շահագործման հանձն-

²⁰ Differential Global Positioning Systems (DGPS), հասանելի է ՂՀ տարածքի 94%-ի համար:

²¹ Real Time Kinematic (RTK), հասանելի է ՂՀ տարածքի 18%-ի համար:

²² Post-processing in DGPS հասանելի է հատուկ պատվերով:

վեց մեկ ծովային ԴԱԿ ծածկույթի 300 կմ շառավղով: Տարածական ճշգրտությունը՝ մինչև 2մ, աշխատանքային հաճախականությունը՝ 283.5 – 325.0 կՀց: 2015-ին ԱԸ «ԿԲԸ»-ին պատկանող այս ծովային ԴԱԿ-ը անվարձահատույց հանձնվեց ՂՀ պաշտպանության նախարարությանը՝ ռազմածովային ուժերի հիդրոգրաֆիկ ծառայության կազմ²³:

Աղբյուրներ և գրականություն

1. Военно-промышленный комплекс государств Центральной Азии и их военнотехническое сотрудничество с зарубежными странами в 1990-е годы. Генерал-майор А. Костюхин, *Зарубежное военное обозрение*. №5, 2009. С. 15-20.
2. *Մարջանյան Ա.Հ.*, Ադրբեջանի տիեզերական տեխնոլոգիական սեզմենտը, «Գլոբուս», 1 (90), 2018:
3. *Մարջանյան Ա.Հ.*, Ադրբեջանի կոսմիկական ծրագրի հետախուզական բաղադրիչը, «Գլոբուս», 2 (91), 2018:

²³ https://www.inform.kz/ru/morskuyu-lokal-nuyu-differencial-nuyu-stancyu-peredali-ministerstvuborony-rk_a2971090

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՐԻԹԻՇ
ՓԵԹՐՈՒԼԻՈՒՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ.
ԳԱԶԻ ԲԱՂԱԴՐԻՉ

Արևին Մանվեյան

Աշխարհի խոշորագույն անդրազգային նավթագազային ընկերության՝ Բրիթիշ Փեթրոլիումի տարեկան զեկույցները ռազմավարական նշանակություն ունեն էներգետիկ բնագավառում զարգացումները, դրանց միտումները և հնարավոր հետևանքները հասկանալու համար: Հետևաբար, պարբերական անդրադարձներն այդ զեկույցներին ու դրանց վերլուծությունը հնարավորություն են տալիս հասկանալու առկա խնդիրները և այն ազդեցությունը, որ էներգետիկ ոլորտն ունի համաշխարհային գործընթացների՝ միջազգային հարաբերությունների, աշխարհատնտեսության ու անվտանգային միջավայրի վրա:

Անդրադարձը հենց գազին պատահական չէ, քանի որ այս վառելիքի պահանջարկը շարունակ աճում է, և ավելի ու ավելի շատ պետություններ են ներգրավվում այս ապրանքի արտադրության ու արտահանման գործին: Իսկ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պետությունների տնտեսական կտրուկ աճը հնարավորություն է տալիս մեծացնել գազի արդյունահանումը և այն արտահանել թե՛ խողովակաշարերով և թե՛ հեղուկացված տեսքով:

Ըստ *BP*-ի տարեկան զեկույցի (*Statistical Review of World Energy-2018*)¹ 2017թ. գազի պահանջարկն աճել է 96 մլրդ մ³-ով կամ մոտ 3%-ով, ինչն այդ վառելիքի աճի ամենաարագ տեմպն է՝ սկսած 2010-ից: Պահանջարկի աճի առաջատարը, ինչպես և սպասվում էր, Չինաստանն է՝ 31 մլրդ մ³, Միջին Արևելքը՝ 28 մլրդ մ³ և Եվրոպան՝ 26 մլրդ մ³: Գազի սպառումը նվազել է ԱՄՆ-ում՝ մոտ 1.2%-ով կամ 11 մլրդ մ³-ով:

¹ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ.:

¹ BP Statistical Review of World Energy-2018, <https://www.bp.com/content/dam/bp/en/corporate/pdf/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf>

Սակայն նույն ժամանակահատվածում՝ 2017թ., գազի արտադրությունն ամբողջ աշխարհում աճել է 131 մլրդ մ³-ով կամ 4%-ով, որը վերջին 10 տարիներին գազի արդյունահանման կրկնակին է: Այդ էներգակրի արդյունահանման աճի առաջատարը Ռուսաստանն է՝ 46 մլրդ մ³-ով, նրան հաջորդում է Իրանը՝ 21 մլրդ մ³-ով:

Գազի առևտուրն աշխարհում աճել է 63 մլրդ մ³-ով կամ 6.2%-ով, իսկ հեղուկացված գազի արտադրությունը և վաճառքն ավելանում են ավելի արագ, քան խողովակաշարային գազինը: Հեղուկացված գազի արտահանման աճի առաջատարներն Ավստրալիան ու ԱՄՆ-ն են՝ համապատասխանաբար 17 և 13 մլրդ մ³-ով, ապա գալիս է Ռուսաստանը՝ 15 մլրդ մ³ և այլն:

Գազի շուկայի զարգացումները և դրա ազդեցությունը տարածաշրջանների ու պետությունների վրա հասկանալու համար կարևոր է հետազոտել, թե *BP*-ի տարեկան զեկույցն ինչպես է ներկայացնում գազի ապացուցված պաշարներն աշխարհում: Հիշեցնենք, որ ապացուցված պաշարներ ասելով հասկանում ենք գազի կամ նավթի այն ռեսուրսները, որոնք հնարավոր է տեխնիկապես արդյունահանել և վաճառել:

Գազի ապացուցված պաշարներով, ըստ 2017թ. տվյալների, աշխարհի առաջատարը նորից Ռուսաստանն է՝ 18.1% կամ 35 տրլն մ³: Վերջին տարիներին, պայմանավորված գազի գնի բարձրացմամբ, առաջատարն Իրանի Իսլամական Հանրապետությունն էր, սակայն այս վառելիքի գնի անկումը ստիպեց մասնագետներին վերահաշվարկ կատարել, ինչի արդյունքում Իրանը նորից հայտնվեց 2-րդ տեղում՝ 17.2% կամ 33.2 տրլն մ³-ով:

Գազի ապացուցված պաշարների առկայությամբ «պատվավոր» երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Կատարը՝ 24.9 տրլն մ³ կամ 12.9%: Չորրորդ հորիզոնականում է Թուրքմենստանը, որի գազի պաշարները կազմում են 10.1% կամ 19.5 տրլն մ³, հինգերորդ և վեցերորդ հորիզոնականներում են ԱՄՆ-ն ու Սաուդյան Արաբիան՝ համապատասխանաբար 4.5% և 4.2%:

Աշխարհում գազի ապացուցված պաշարների 40.9%-ը կենտրոնացված է Մերձավոր Արևելքում, որն այդպիսով շարունակում է պահպանել էներգետիկ աշխարհաքաղաքական կարևորագույն տարածաշրջանի կարգավիճակն այս բնագավառում: Երկրորդ հորիզոնականը զբաղեց-

նում են ԱՊՀ տարածաշրջանի պետությունները՝ 30.6% համապատասխանաբար: Հասկանալի է, որ առաջատարներն այստեղ Ռուսաստանը և Թուրքմենստանն են: Երրորդ հորիզոնականում Ասիա-խաղաղովկիանույան տարածաշրջանն է՝ 10%-ով կամ 19.3 տրլն մ³ գազի ծավալով:

Ըստ *BP*-ի զեկույցի՝ գազի շահագործման նման տեմպերի պահպանման դեպքում մերձավորարևելյան գազը կբավարարի ևս 120 տարի: Համեմատության համար նշենք, որ 1987թ. այդ գազի ծավալը կբավարարեր առաջիկա 400 տարիներին, սակայն գազի սպառման և արդյունահանման ծավալների արագ աճը ստիպել է այս թվերը վերանայել: ԱՊՀ տարածաշրջանի երկրներում, հատկապես Ռուսաստանում գազի արդյունահանման նման տեմպերի դեպքում այդ հումքը կբավարարի ևս 80 տարի: Հասկանալի է, որ գազի արդյունահանման ընդլայնումը և շահագործման տեմպերի ավելացումը ստիպում են անընդհատ վերանայել այս թվերը:

Աշխարհում տարեկան արդյունահանվում է 3 տրլն 680.4 մլրդ մ³ գազ: Գազի արդյունահանման առաջատարը Հյուսիսային Ամերիկան է՝ 951 մլրդ մ³, առյուծի բաժինը ընկնում է ԱՄՆ-ին՝ 734.5 մլրդ մ³ կամ աշխարհում արդյունահանվող գազի 20%:

Արդյունահանման ծավալներով երկրորդը ԱՊՀ պետություններն են՝ 815.5 մլրդ մ³, իսկ առաջատարը Ռուսաստանն է՝ 635 մլրդ մ³ կամ 17%, այս ցուցանիշով ռուսները զիջում են միայն ամերիկացիներին: Երրորդ հորիզոնականն այս ցանկում, հասկանալի կերպով, պատկանում է Մերձավոր Արևելքին՝ 659.9 մլրդ մ³ ցուցանիշով: Այստեղ առաջատարն Իրանի Իսլամական Հանրապետությունն է՝ 223 մլրդ մ³ տարեկան ցուցանիշով, ինչն աշխարհում արդյունահանվող գազի 6.1%-ն է:

Աշխարհում գազի արդյունահանման այս մրցակցության մեջ «պատվավոր» չորրորդ ու հինգերորդ հորիզոնականները պատկանում են Կանադային և Կատարին, որոնք արդյունահանում են՝ համապատասխանաբար 176,3 և 175,7 մլրդ մ³ գազ, ինչը կազմում է աշխարհում արդյունահանվող այդ վառելիքի 4.81% և 4,8%-ները: Գազի խոշոր արդյունահանող են նաև Չինաստանը՝ 149.2 մլրդ մ³ կամ 4.1%, Նորվեգիան՝ 123.3 մլրդ մ³ կամ 3.3%:

Գազի հիմնական սպառումը, ինչպես և սպասվում էր, տեղի է ունենում Հյուսիսային Ամերիկայում՝ 942.8 մլրդ մ³, որից 739 մլրդ մ³ կամ 20.1%՝ միայն ԱՄՆ-ում: Սպառման ծավալով երկրորդը Ասիա-խաղաղ-

օվկիանոսյան տարածաշրջան է՝ 769 մլրդ մ³ կամ 21.0%: Այս տարածաշրջանի թիվ մեկ գազ սպառողը Չինաստանն է՝ 240.4 մլրդ մ³ կամ ընդհանուր սպառման 6.6%:

Սպառման ծավալներով հաջորդը ԱՊՀ պետություններն են՝ 574.6 մլրդ մ³, այս շարքում խոշորագույն սպառողը Ռուսաստանն է՝ 424.8 մլրդ մ³ կամ համաշխարհային սպառման ծավալի 11.6%-ը, սա, նկատենք, երկրորդ արդյունքն է ԱՄՆ-ից հետո: Հաջորդ 4-րդ հորիզոնականն այս ցուցակում զբաղեցնում է Մերձավոր Արևելքը՝ 536.5 մլրդ մ³ տարեկան ծավալով, առաջատարներն այս տարածաշրջանում Իրանն ու Սաուդյան Արաբիան են՝ համապատասխանաբար 214.4 մլրդ մ³ և 111.4 մլրդ մ³ ծավալներով, ինչը կազմում է ընդհանուր սպառման 5.3% և 3.1%-ը:

Եվրոպական մայրցամաքը մի փոքր է զիջում այս տարածաշրջանին՝ գազի սպառման ծավալներն այստեղ կազմում են 531.7 մլրդ մ³ կամ զլոբալ սպառման 14.5%-ը: Այստեղ խոշորագույն սպառողն է Գերմանիան՝ 90.2 մլրդ մ³ տարեկան, ապա հետևում են Մեծ Բրիտանիան՝ 78.8 մլրդ մ³, Իտալիան՝ 71.1 մլրդ մ³ և այլն:

Ինչպես արդեն նշվեց, գազի սպառումը և արդյունահանումն անընդհատ աճում են, ինչը նշանակում է, որ ակտիվությունն այս շուկայում պահպանվում է: Միաժամանակ, պետք է նկատենք, որ գազի միասնական շուկա և այդ ապրանքի գնագոյացման ընդհանուր համակարգ գոյություն չունի, հետևաբար գազի գինը տարածաշրջանից տարածաշրջան էականորեն տարբերվում է:

Այսպես, խողովակաշարային գազի գինը Եվրոպայում 2017թ. կազմել է միջինը \$5.7 -mBtu (1 միլիոն mBtu-ն հավասար է 27.2 մ³)², այն դեպքում, երբ ԱՄՆ-ում դրա գինը եղել է \$2.96 mBtu, իսկ Կանադայում \$1.9 mBtu, այսինքն՝ կրկնակի ու նույնիսկ եռակի էժան: Հեղուկացված գազն էլ ավելի թանկ է, և դրա գինը Ճապոնիայի և Կորեայի շուկայում կազմում է մոտ \$8 mBtu:

Խողովակաշարային գազ արտահանող ամենամեծ պետությունը Ռուսաստանն է՝ մոտ 215.4 մլրդ մ³ միայն 2017թ.: Այդ գազի առյուծի բաժինը՝ 189.3 մլրդ մ³, գնացել է դեպի Եվրոպա, իսկ ԱՊՀ պետությունների մատակարարվել է մոտ 26.2 մլրդ մ³ գազ: Եվրոպային գազ մատակարարող երկրորդ պետությունը Նորվեգիան է՝ 109.2 մլրդ մ³ տարեկան:

²Natural Gas and Coal Measurements and Conversions, <https://www.extension.iastate.edu/agdm/wholefarm/html/c6-89.html>

Հեղուկացված գազի շուկան թեև մեծ չէ, սակայն այստեղ կան շատ խաղացողներ, բայց դոմինանտ է Կատարը՝ 103.4 մլրդ մ³: Հիմնական սպառողը Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանն է՝ 69.6 մլրդ մ³: Հեղուկացված գազի խոշոր մատակարար է նաև Ավստրալիան՝ 75.9 մլրդ մ³, և այս գազի սպառման հիմնական շուկան ևս ասիական պետություններն են:

Այսպիսով, գազի շուկան դինամիկ զարգացող և ընդլայնվող էներգետիկ շուկաներից է, որն իր առաջընթացն ապահովում է նաև նավթի շուկան գրավելու հաշվին: Այս շուկայում առայժմ ուժեղ են Ռուսաստանի դիրքերը, սակայն նկատվում է, որ այստեղ էական փոփոխություններ են տեղի ունենում: Հիմնական փոփոխությունը պայմանավորված է հեղուկացված գազի արտահանման ծավալների ընդլայնման ու դրանց գների շարունակական անկման մեջ: Այսինքն՝ այս շուկայում առկա է գազի հեղուկացված և խողովակաշարային կոչվող տեսակների միջև ընթացող մրցակցություն: Գազի սպառման հիմնական ծավալները, ինչպես և նավթի դեպքում, Արևմուտքից տեղափոխվում են դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջան:

ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ. ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԸ

*Անդրանիկ Հովհաննիսյան**

Ույղուրական սփյուռքը ձևավորվել է XIX դարի վերջին: Այդ ժամանակ, երբ բազմաթիվ ապստամբություններից հետո սկսեցին ոտնահարվել Չինաստանի մուսուլմանների իրավունքները, նրանց մի մասը (հատկապես ույղուրներն ու դազախները) ստիպված եղավ փախչել Սինցզյանից դեպի Կենտրոնական Ասիա: Ներկայում ույղուրները հիմնականում բնակվում են Ղազախստանում, Ղրղզստանում, Ուզբեկստանում, Թուրքիայում, Սաուդյան Արաբիայում, Պակիստանում, ԱՄՆ-ում և Գերմանիայում: Աշխարհում ույղուրական սփյուռքի հիմնական կենտրոնները ներկայացված են *Աղյուսակ 1*-ում¹:

XX դարի կեսերին տարբեր տարածաշրջաններում հաստատված ույղուրական համայնքները Թուրքիայի և Արևմուտքի օգնությամբ սկսեցին ձևավորել իրենց միավորումները՝ նպատակ ունենալով պահպանել ույղուրական ինքնությունը, ինչպես նաև աջակցել և զարգացնել ընդհանուր ազգային պայքարը հանուն «Արևելյան Թուրքեստանի» (Չինաստանի Սինցզյան-ույղուրական ինքնավար շրջանի արևմտյան տարածքները) անկախության: 1970-ական թթ. ի վեր նյութական, բարոյական և ֆինանսական հիմնական աջակցությունն ույղուրներին տրամադրվել է Թուրքիայի կողմից: XVIII դարում Օսմանյան կայսրության աջակցությամբ՝ Մ.Բուխարայի ղեկավարությամբ Ցին կայսրության տարածքում ձևավորված «Արևելյան Թուրքեստանի ազգային-ազատագրական շարժումը» վերածնունդ ապրեց 1990-ականներին Թուրքիայում: Շարժումը ղեկավարեց Ի.Ալպետքինը: Ոգեշնչվելով Խորհրդային Միության փլուզումից, ինչի հետևանքով Կենտրոնական Ասիայում անկախություն ստացան միանգամից

* «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

¹ *Ույղուրական սփյուռքը աշխարհում*, <https://www.britannica.com/topic/Uighur>, 14.10.2018թ.

4 թյուրքալեզու պետություններ՝ Ղազախստանը, Ղրղզստանը, Ուզբեկստանը և Թուրքմենստանը (Արևմտյան Թուրքեստան) Ի.Ալպետքինը կոչ արեց ստեղծել տարածաշրջանում 5-րդ թյուրքալեզու պետությունը՝ Ույղուրստանը (Արևելյան Թուրքեստան)²: «Թուրքեստան» պատմաաշխարհագրական տարածաշրջանը ներկայացված է *Քարտեզ 1*-ում:

Սակայն 1990-ականների կեսերին, Չինաստանի տնտեսական և քրդական անջատողականության գործընթացի ակտիվացման ճնշման ներքո, Թուրքիան ստիպված էր որոշ սահմանափակումներ մտցնել ուլդուր ազգայնականների նկատմամբ: 1998թ. թուրքական կառավարությունը Մինցզյանը պաշտոնապես ճանաչեց Չինաստանի անբաժանելի մաս և արգելեց իր տարածքում գտնվող ուլդուրական սփյուռքի ներկայացուցիչներին կազմակերպել հանրահավաքներ³:

Աղյուսակ 1

Ուլդուրական սփյուռքի հիմնական կենտրոններն աշխարհում

Պետությունը	Ուլդուրների թվաքանակը
Ղազախստան	265 000
Ղրղզստան	55 000
Ուզբեկստան	45 000
Թուրքիա	38 000
Սառույան Արաբիա	36 000

Այդ պատճառով 1990-ականների վերջին Թուրքիայում գործող ուլդուրական կազմակերպությունները ստիպված էին փնտրել նոր վայրեր իրենց պայքարը շարունակելու համար: Այս պարտավորությունն իր վրա վերցրեց Արևմուտքը՝ ԱՄՆ-ը և Գերմանիան: Այսպիսով, 1998թ. Արևելյան Թուրքեստանի ազգային կենտրոնը տեղափոխվեց Մյունխեն (Գերմանիա), որտեղ 1999թ. ստացավ նոր անուն՝ Արևելյան Թուրքեստանի ազգային կոնգրես: 2004թ. Արևմուտքի աջակցությամբ ստեղծվեցին երկու նոր ուլդուրական կազմակերպություններ՝ Արևելյան Թուրքեստանի հանրապետության վտարանդի կառավարությունը Վաշինգտոնում (ԱՄՆ) և Համաշխարհային ուլդուրական կոնգրեսը Մյունխենում (Գերմանիա): Առաջին կազմակերպությունում ներկայացված էին ուլդուրա-

² Ի.Ալպետքինի էլոյթը *Ստամբուլում*, <http://www.uyghurensemble.co.uk/en-html/uyghurs-diaspora>, 14.10.2018թ.

³ *Համաշխարհային ուլդուրական կոնգրեսի պաշտոնական կայքը*, <http://www.uyghurcongress.org/ru/?cat=150>, 16.10.2018թ.

կան սփյուռքի ծայրահեղական մասի շահերը, երկրորդի նպատակներն էին՝ պայքարել Չինաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների համար և պահպանել ուլդուրական ինքնությունն սփյուռքում: 2005թ. ՉԺՀ-ում ազատ արձակվեց ուլդուր «քաղքանտարկյալ» Ռ.Քաղիրը, որն անմիջապես մեկնեց Միացյալ Նահանգներ: 2006թ. Շվեդիայի խորհրդարանի պատգամավոր Ա.Էնոքսոնն առաջադրեց Ռ.Քաղիրի թեկնածությունը Նոբելյան մրցանակի համար, ինչը կտրուկ քննադատության ենթարկվեց պաշտոնական Պեկինի կողմից: Նույն թվականին Ռ.Քաղիրը ղեկավարեց Համաշխարհային ուլդուրական կոնգրեսը:

Քարտեզ 1.

«Թուրքեստան» պատմաաշխարհագրական տարածաշրջանը Կենտրոնական Ասիայում. XIX-XXդդ.



2007-2009թթ. ընթացքում Մինցյան-ուլդուրական ինքնավար շրջանի մի քանի քաղաքներում տեղի ունեցան զանգվածային բողոքներ և ուստիկանների հետ բախումներ, որոնց հետևանքով, ըստ արևմտյան լրատվամիջոցների, զոհվել էր մի քանի հարյուր և տուժել ավելի քան 1400 մարդ⁴: Տեղի ունեցած անկարգությունների կազմակերպման մեջ Պեկինը մեղադրեց Համաշխարհային ուլդուրական կոնգրեսին: Գաղտնիք չէ, որ այդ կազմակերպությունը պաշտոնապես հովանավորվում է ԱՄՆ-ի կողմից՝ ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (*USNDF*), Ույ-

⁴ *El Pais*, https://elpais.com/internacional/2009/07/09/actualidad/1247090412_850215.html, 18.10.2018թ.

ղուրների ամերիկյան ասոցիացիայի (UAA) և Երիտասարդ թուրքերի (TYT) միջոցով: Ի դեպ, «Երիտասարդ թուրքեր» (*The Young Turks*) հեռուստաալիքը ղեկավարում է Ջենք Բ. Ուլդուրը (*Cenk Kadir Uygur*), որն ԱՄՆ-ում հաճախ քննադատությունների է արժանացել իր հրապարակումներում Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար: Չնայած 1990-ականների վերջին Անկարայի հայտարարություններին, թուրքական իշխանությունները չեն դադարեցրել աջակցությունն ուղղուրներին: Այժմ Թուրքիայի հատուկ ծառայություններն իրենց գործունեությունը քողարկում են ՀԿ-ների մշակութային և կրթական ծրագրերի տեսքով: Օրինակ, Արդաստանի տարածքում նրանք աշխատում են հետևյալ կազմակերպությունների՝ «*Ittipak*» ՀԿ-ի, «*Erpan*» ուլդուրական տեղեկատվական կենտրոնի և «Ժողովրդավարություն» մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, որոնք գտնվում են Բիշքեկում, Ղազախստանի տարածքում՝ Արևելյան Թուրքեստանի ազատագրման կազմակերպության և «Ուլդուրստան» կուսակցության հետ: Ի դեպ, Ղազախստանի Հանրապետության Գերագույն դատարանի որոշմամբ, վերոնշյալ կազմակերպությունները 2000-ականների կեսից սկսած՝ արգելված են Ղազախստանում: Ակտիվ աշխատանք է կատարվում նաև Ուզբեկստանում գտնվող ուլդուրական մշակութային և քաղաքական կազմակերպությունների հետ, որոնք գտնվում են Ուզբեկստանի հատուկ ծառայությունների խիստ հսկողության տակ: Հատկապես, խոսքը վերաբերում է Արևելյան Թուրքեստանի իսլամական կուսակցությանը:

Այսօրվա դրությամբ Համաշխարհային ուլդուրական կոնգրեսը ձգտում է անկախ ուլդուրական պետություն ստեղծել, սակայն գիտակցում է, որ ներկայիս իրավիճակում դա գրեթե անիրական է: Պատճառները բազմաթիվ են, սակայն ընդգծենք հետևյալ երկուսը.

1. ներկա փուլում աշխարհում չկա որևէ պետություն, որը կարող է Չինաստանին ստիպել հրաժարվել իր իսկ տարածքից,
2. տնտեսության արագ աճի և ռազմական հզորության շնորհիվ հեշտ չէ նաև ճնշել Չինաստանին՝ ստիպելով վերջինիս ընդլայնել ուլդուրների ինքնակառավարումը:

Այդ պատճառով Համաշխարհային ուլդուրական կոնգրեսի հիմնադիր փաստաթղթերում պաշտոնապես ոչինչ չի ասվում անկախության մասին: 2012թ. մայիսին Տոկիոյում (Ճապոնիա) կայացած համագումար-

րում հաստատվեց, որ «ույղուրները չեն պահանջում ստեղծել անկախ պետություն Չինաստանի Մինցզյան-ույղուրական ինքնավար շրջանի տարածքում: Գլխավոր նպատակն է՝ ՉՖՀ շրջանակներում հասնել իրական քաղաքական և մշակութային ինքնավարության»⁵: Ինչ վերաբերում է Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետություններին, դրանք նախընտրեցին պահպանել բարեկամական, տնտեսական ու ռազմավարական հարաբերությունները Պեկինի հետ, երբ 2001թ. հիմնեցին Շանհայի համագործակցության կազմակերպությունը, որն իր աշխատանքը սկսել էր 1990-ականների կեսին:

Չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը որոշակիորեն ազդել է Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա. ույղուրներին պաշտպանելու գործունեությունը զգալիորեն թուլացել է: Սակայն պետք է նշել, որ Թուրքիան մինչ օրս չի հրաժարվել իր պանթյուրքական նկրտումներից, որտեղ նաև ույղուրներն ինչ-որ դեր ունեն: Հիշեցնենք, որ 2009թ. հուլիսին իտալական Աքվիլա քաղաքում տեղի ունեցած «Մեծ ութնյակի» գագաթաժողովի ժամանակ Ռ.Էրդոդանը, անդրադառնալով ՉՖՀ Ուրումչի քաղաքում տեղի ունեցած ույղուրական ցույցերին և դրա հետևանքներին, դատապարտեց Պեկինին՝ օգտագործելով կոշտ արտահայտություններ. «Ույղուրների դեմ իրականացվել է ցեղասպանություն»⁶: Ավելին, 2015թ. չին-թուրքական պայմանավորվածությունները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության զարգացման վերաբերյալ չեն խանգարում Թուրքիային օգնել թյուրքախոս ույղուրներին Սիրիա և Իրաք տեղափոխվել: Ըստ Չինաստանի հատուկ ծառայությունների տվյալների, Մինցզյան-ույղուրական ինքնավար շրջանից 5000-ից ավելի ույղուր է կովում Սիրիայում գործող տարբեր ահաբեկչական խմբավորումներում⁷: 2015-ի հունվարին տեղեկություն էր հայտնվել, որ Չինաստանից փախած ույղուրները Թաիլանդում հեշտությամբ ձեռք են բերում կեղծ թուրքական անձնագրեր, որոնց միջոցով անցնում են Թուրքիա, իսկ այնտեղից՝ Սիրիա կամ Իրաք, «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման շարքերը համալրելու համար:

⁵ *Уйгуры поспорили КНР с Японией*, <http://www.kommersant.ru/doc/1939198>, 18.10.2018թ.

⁶ *News Bakililar*, https://aze.az/news_premeministr_turcii_na_23475.html, 18.10.2018թ.

⁷ *Syria says up to 5,000 Chinese Uighurs fighting in militant groups*, <https://www.reuters.com/article/uk-mideast-crisis-syria-china/syria-says-up-to-5000-chinese-uighurs-fighting-in-militant-groups-idUSKBN1840UP>, 20.10.2018թ.

Ինչպես արդեն նշել ենք, 1990-ականների վերջին Անկարան արգելեց իր տարածքում գտնվող ուլդուրական սփյուռքի ներկայացուցիչներին կազմակերպել հանրահավաքներ, ինչի պատճառով ուլդուրները ստիպված էին փնտրել նոր վայրեր, որտեղ կկարողանային շարունակել իրենց պայքարը: Բնականաբար Վաշինգտոնը չէր կարող բաց թողնել նման պատմական հնարավորությունը: Աջակցելով ուլդուրների պայքարին՝ Միացյալ Նահանգները հնարավորություն ստացավ քաղաքական ճնշում գործադրել ՉԺՀ-ի վրա: Անկասկած, ներկայում «ուլդուրական խնդիրը» Միացյալ Նահանգներին հիմնականում անհրաժեշտ է որպես գործոն, որի շնորհիվ Վաշինգտոնը կարող է Պեկինի դեմ պատժամիջոցներ կիրառել: Չինաստանի տնտեսությունն աճում է 7 անգամ ավելի արագ, քան ԱՄՆ տնտեսությունն աճել է վերջին տասնամյակում: Հետևաբար, Չինաստանի արագ զարգացումը կասեցնելու համար ԱՄՆ-ը կսկսի հայտնի «պատժամիջոցների քաղաքականությունը»: 2018թ. օգոստոսին ամերիկյան *The Washington Post* թերթի հրապարակած աղմկալի հոդվածի համաձայն՝ «Չինաստանը քարոզարշավ է կազմակերպել Մինցզյան-ուլդուրական ինքնավար շրջանի թյուրքալեզու մուսուլմանների դեմ: Ուրումչիում ստեղծվել են վերադաստիարակման ճամբարներ, որտեղ թյուրքալեզու մուսուլմաններն արդեն մի քանի տարի է, ինչ ենթարկվում են բռնության»⁸: Սեպտեմբերին մի խումբ ամերիկացի օրենսդիրներ կոլեկտիվ նամակ են հղել ԱՄՆ պետքարտուղարին և ֆինանսների նախարարին՝ պահանջելով պատժամիջոցներ կիրառել չինական այն պաշտոնյաների դեմ, որոնք պատասխանատու են Չինաստանի Մինցզյան-ուլդուրական ինքնավար շրջանի մուսուլմանների ճնշման գործում: Հոկտեմբերին ՉԺՀ իշխանությունները հրապարակեցին Մինցզյան տարածաշրջանում ծայրահեղականության դեմ պայքարի մասին փաստաթուղթ⁹, որը հաստատեց մուսուլմանների «վերապատրաստման ճամբարների» առկայությունը: Փաստաթղթում նշվում է, որ ճամբարները, «Մասնագիտական վերապատրաստման և վերադաստիարակման կենտրոնները» ստեղծվել են այն մարդկանց համար, ովքեր գտնվում են «ծայրահեղականության ազդեցության տակ»: Կալանվածներին վերադաստիարակում են

⁸ *China's repugnant campaign to destroy a minority people*, https://www.washingtonpost.com/opinions/chinas-repugnant-campaign-to-destroy-a-minority-people/2018/05/20/9fe061b4-5ac0-11e8-b656-a5f8c2a9295d_story.html?noredirect=on&utm_term=.0e05fa665bcb, 21.10.2018թ.

⁹ *Պաշտոնական փաստաթուղթ*, http://www.sohu.com/a/258631718_115479?g=0, 21.10.2018թ.

հոգեբանների օգնությամբ և գաղափարական կրթության միջոցով: Փաստաթղթում նշված են նաև Մինցզյանում գոյություն ունեցող արգելքները: *Տեղացիները չեն կարող.*

- հազնել փարաջա,
- պահել երկար մորուք,
- երեխաներին տալ արաբական անուններ,
- ոտնահարել կանանց և երեխաների հանրային կրթություն ստանալու իրավունքը,
- տարածել հալալ (թույլատրված) գաղափարը, բացի սննդից:

Եզրակացություններ

Այսպիսով, ներկայում Չինաստանի Մինցզյան-ույդուրական ինքնավար շրջանում անջատողականության ակտիվացման գործում նշանակալի դեր են խաղում արևմտյան երկրներում գտնվող և այնտեղից ֆինանսավորվող ույդուրական կազմակերպությունները: Այս կազմակերպություններն ակտիվորեն արձարծում են ՉԺՀ-ում ույդուրների ճնշման, նրանց իրավունքների և ազատությունների խախտման հարցը: Սա ստիպում է կասկածանքով վերաբերվել ԱՄՆ-ի, ինչպես նաև ույդուրական սփյուռքի կողմից հրապարակված տեղեկություններին: Պետք է նաև նշել, որ Միացյալ Նահանգների աջակցությամբ ստեղծված Համաշխարհային ույդուրական կոնգրեսը, որը, ենթադրվում է, պետք է մի կազմակերպության շրջանակում միավորեր աշխարհում սփռված ույդուրական շարժումները, ձախողեց այդ նպատակը: Ույդուրական սփյուռքը բաժանված է մի շարք կազմակերպությունների, որոնք ստեղծվել են տասնյակ տարիների ընթացքում: Այս կազմակերպությունները բազմաթիվ հանդիպումներ և ցույցեր են անցկացրել, սակայն անդամների նման ակտիվության պատճառով ընդամենը գործոն են դարձել որոշ ուժերի ձեռքին: Այնուամենայնիվ, նրանց գործունեության արդյունքները դեռևս բավական համեստ են: Հիմնական պատճառը սփյուռքի ներքին խնդիրներն ու Չինաստանի հզորության էական ցուցանիշներն են:

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԲ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղդասյան

Հանձնված է տպարան 21.11.2018թ.

Թիվ 9 (98), 2018թ.

Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում